

Գ Գ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՈՆԱՏՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ-ՈՒՄ 1983-1984 ԹԹ.  
ԳԱՇՏԱՅԻՆ ՀԱՅԳԻՏՈՒԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ  
ՆՎԻՐՎԱԾ  
ԳԻՏՈՒԿԱՆ ՆՈՏԱՇՐՋՈՆ

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԹԵԶԻՈՆԵՐ

ապրիլ 1985

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԱ ՀԲԱՏՈՒՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1985 թ.



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱԴԵՄԻԱ

ՀԱՅԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-ՈՒՄ 1983-1984 թթ. ԴԱԵՏԱՑՑԻՒՆ

ՀԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ

#### ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԽՍՏԱՇՐՋԱՆ


ԶԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԶԻԱՆՁՐ

ապրիլ 1985 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ବାରାନ୍ଦି

1985



ԿՐԱՎԻՒՐ Բ.Ն. ԱՐԱԿԵԼՅԱՆ

Редактор: Б.Н.Аракелян

НАУЧНАЯ СЕССИЯ  
ПОСВЯЩЕННАЯ ИТОГАМ ПОЛЕВЫХ АРХЕОЛОГИ-  
ЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ В АРМЯНСКОЙ ССР

/1983 - 1984 гг./

апреля 1985 г.

ТЕЗИСЫ ДОКЛАДОВ  
(на армянском языке)

© Издательство АН Армянской ССР, 1985

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1985

ԽԱԹԱՐՎԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇԵՐՏՈՎ ԱՌՈՂԵՑԱՆ ՀՈՒՉԱՐԺԱՆ-  
ՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԸՆՏԾԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻՑԹԱՆԴՐԻ ՎԵՐԱՎԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՉ

Խաթարված մշակութային շերտով ստորինապալեռլիթյան հուշարձան-ների ուսումնասիրության պրոցեսմը ներկայումս խիստ հրատապ է։ Դա վերաբերում է հատկապես աշելյան ժամանակաշրջանի հուշարձաններին, որոնց ուսումնասիրության կարևորագույն նպատակներից մեկը, մեր կարծիքով, բաց բնակավայրերի դինամիկայի հայտնաբերումն է։ Այս հանգամանքը անհրաժեշտ է ընլազել, քանի որ համաձայն ցայծմ տիրող կարծիքի հնավայրերի հատագուման ժամանակ հնարավոր է որոշել սոսկ հնագիտական նյութի ընդունութ տեղաբաշխումը, իսկ մարդկանց տնտեսա-արտադրական կենտրոնների հայտնաբերումը անկարելի է համարվում։

Սոցիալ-տնտեսական երեսույթների վերականգնման համար բաց տիպի հուշարձանների լիարժեքությունը ցույց տալու նպատակով թերփում են հեղինակի դիտարկումներն ու եզրահանգումները՝ կատարված Հատիս 1 և 2 վերինաշենյան հուշարձանների ուսումնասիրության ընթացքում։

Ուսումնասիրության պլանիզրաֆիական և տեխնիկա-տիպաբանական հետազոտման արդյունքներն են.

1. Հնագիտական նյութի գրավում է խիստ սահմանափակ տերիտորիա՝ երկու կենտրոնացած կուտակումներով։

2. Հնագիտական նյութի հորիզոնական տեղաշարժը զգալի չէ։

3. Ինդուստրիաները խստորեն տարբերվում են ըստ գործիքների տեսակների տոկոսային հարաբերության։ Եթե Հատիս 1-ում տիրապետում են ձեռքի հատիչները /ըիծաներ/ , իսկ լեռուայան միջուկներն ու ցլեպներն երկրորդական նշանակություն ունեն, ապա Հատիս 2 ինդուստրիայի դիմագիծը որոշվում է հենց գործիքների լեռուայան տեսակներով, մինչդեռ երկողմանի մշակված /ըիծացիալ/ ձևերը հատուկենա են։

4. Հուշարձանները նույնադրա են՝ կայան-արհեստանոցներ։

5. Հուշարձանները համաժամանակյա են, թվագրվում են վերին աշելով։

6. Ցուրաքանչյուր ինդուստրիայում առանձնանում են ժամանակագրութեն հաջորդական և ծագումնաբանորեն կապակցված երկու համալիր։

7. Հատիս 1 և 2 ինդուստրիաները, ամենայն հավանականությամբ, պատկանում են միևնույն մշակույթին։

Այսպիսով, անշուշտ որոշ զգուշակորությամբ, կարելի է ընդունել, որ Հատիս 1 և 2 ինդուստրիաներին հառուկ է ժամանակագրուակն միասնությունը և մշակութային ծագումնաբանական ազգակցությունը։ Այս պարագայում ավյալ հուշարձանները միշտ կլինի դիտել որպես մարդկանց միկնույն խմբին պատկանող կողք-կողքի անդադրված, իրարից անջատ տնտեսա-արտադրական երկու կենտրոններ։ Այս երկույթը հազիկ թե պայմանավորված լինի ընական գործոնի ազդեցությամբ։ Կարծում ենց, որ այն պետք է մեկնաբանել սոցիալական գործոնի առկայությամբ։

Ա. Հատիսի վերին աշելում արդեն ոչ միայն առանձնանում են քարի մշակմամբ զբաղվող Վարպետներ, այլև նրանց մեջ կատարվում է նեղ մասնագիտացում՝ ի դեմս ժեռուկ հատիչներ և լեռուայան ցլեպներ պատրաստող Վարպետների նմբերի։

Բ. Տվյալ ընակատեղիում գործող երկու արտադրական համալիրները /արհեստանոցներ/ միաժամանակ հանդիսացել են նախնադարյան մարդկանց տնտեսա-կենցաղային կենտրոններ։ Տնտեսական յուրաքանչյուր ըջիչի մեջ աշխատանքային գործունեության այլաքնույթ ձևերը հավանաբար լրացրել են մեկը մյուսին։

Գ. Հատիսցիների ամեն մի սերունդ իր նախնիներից ոչ միայն ընդօրինակել է քարի մշակման ձևերն ու հարները, այլև քական երկար ժամանակահատվածում պահպանել է իր ընակավայրի տեղադրությունը և սահմանները։

Դ. Ցլեպներից գործիքներ պատրաստելու սովորույթը Հատիսի աշելում նոր էր միայն սկզբանավորված։ Գործիքների ավյալ համակարգը այստեղ հասունանում էր, ամենայն հավանականությամբ, ոչ թե լեռուայան, այլ երկկողմանի մշակված գործիքների հիման վրա։ Ավելին, հիմքեր կան ենթադրելու, որ Հատիսի ցլեպից գործիքները ոչ այլ ինչ են, եթե ոչ վերինաշելյան հատիչների զարգացման եզրափակիչ փուլը։

Այս սպոնտան իննովացիան, որը հանգեցնում է հաջորդ՝ մուստերյան շրջափուլում տիրապետող գործիքների նոր որակի համակարգին, Հատիսի աշելում ծագել է հատիչներ պարաստող Վարպետների միջավայրում։ Նախադրյալներ կան ենթադրելու, որ Հատիսի վաղապահեության գործիքների զարգացման նոր աստիճանը նշանավորող զարգարը առանձին անհատների նախածեռնության արդյունք է։

Կովկասի, մասնավորապես Հայաստանի աշելի ուսումնասիրության գործում բաց տիպի հուշարձանների դերը հսկայական է։ Տվյալ հնավայրերի հազիտական նյութը պարունակում է շափազանց բազմակողմանի ին-

**Յորմացիա:** Այդ ինֆորմացիայի վերծանման հիմնական բանալին ինդուստրիաների տեխնիկա-տեխպարանական և պլանիզուաֆիտական հետազոտման մեթոդների գուգակցումն է:

### Ս.Կ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ /ՀՊԳԲ/

ԼՈՒԽԱԿԵՐՏ ԱՌԱՋԻՆ ՇԱՐԱՑՐԻ ՎԵՐԻՆ ՊԱԼԵՍԼԻԹԻ ՄՇԱԿՈՒՅԹԲԸ

1. 1983-1984թթ. դաշտային աշխատանքների ժամանակ Լուսակերտ 1-ին քարայրի ծայրամասային նստվածքների Ա և Բ շերտերից պեղվել է վերին պալեոլիթյան ժամանակաշրջանի մի մշակույթ՝ իր բոլոր մանրամասներով:

Հավաքածուն բաղկացած է քարի դարի արդյունաբերությունից, հոլոցենյան ոսկրային մնացորդներից և գլխավորապես՝ միջնադարյան խեցեղենի կտորներից: Նախնական ուսումնասիրության են ենթարկվել միայն քարե հրերը, որոնք դասակարգվել ու համեմատվել են ըստ ստացման տեխնիկայի, հարդարման օմի և տիպաքանության: Ստորև ներկայացվում է այդ մշակույթի համառոտ ընութագիրը:

2. Ապացուցված է, որ մշակույթը սկզբնապես գրավել է քարայրի նստվածքների վերին շերտը, իսկ ժամանակի ընթացքում լվացվել է և տարվել մուտքից դուրս ու տեղ զբաղեցրել քարայրի մուստերյան և աշելյան շերտերի լայնակի կտրվածքի միջին մասում:

Ներտագրական երկայնակի կտրվածքը հնարավորություն է տալիս վերականգնել մշակույթի սկզբնական դիրքը, որը սակայն չի հանգեցնում այսպես կոչված „նախաօրինյակյան” վարկածին, որի համաձայն վերին պալեոլիթը շերտագրորեն նախորդում է մուստերյան մշակույթին:

Կարծում ենք, որ լուսակերտ 1-ին քարայրի շերտագրությունը կնպաստի լուծելու այդ կննութ հարցը:

3. Վերին պալեոլիթի մշակույթը տեխնիկապես ներկայացված է միջուկներով, ծլեպներով ու շեղեներով՝ թափոնի առկայությամբ: Տեղերն ու ծլեպները համապատասխանում են միջուկներին, իսկ շեղենը մանրառակած կտորները՝ շեղերին:

Քարայրի ուշ մուստերյան և վերին պալեոլիթյան մշակույթների համեմատությունից պարզում է, որ քարի մշակման լևալուայն եղանակը աստիճանաբար փոխակերպվել է նախարիզմատիկ տեխնիկայի, կողային հանույթով, որը և ապացուցվում է դեռևս ոչ կանոնավոր, բայց առավելագույն քանակի հասած շեղենը առկայությամբ:

4. Գործիքները պատրաստված են վերին պալեոլիթին հատուկ հարդարման եղանակներով, առավելապես գերիշխում է ոչ խորը ծայրային հարդարումը, երկար շեղբերի հատումը և ծլեպների վերջապորությունների կլորացման մեջ: Գործիքների տեսակների մեջ աշքի են ընկնում կարիշները, սայրերը և թեք հատված իրերը: Այս բոլորը կազմում է մշակույթի գործիքների 47%, չհաշված միկրոգործիքները:

5. Ուսումնասիրվող մշակույթը համալրված է ինչպես մուստերյան, այնպես էլ ավելի ուշ շրջանի մեզոլիթյան մշակույթներին հատուկ գծերով, որը խոսում է նրա երկար գոյատեռության մասին: Լուսակերտի վերին պալեոլիթի՝ այդ նույն քարայրի մուստերյան մշակույթի հետ ընդհանրությունն ավելի է, քան նույնուսի կամ Սատանի դարի վերին պալեոլիթի հետ, որոնք ըստ երևույթին, ավելի զարգացած փուլի արդյունք են:

Ելնելով նշված փաստերից կարող ենք նշել, որ ուսումնասիրվող մշակույթը ավելի հին է և որ կարեռն է՝ էվոլյուցիոն եղանակով ծագում է տեղի մուստերյան մշակույթից: Այսպիսով՝ նշված քարայրում հայտնաբերված երեք ժամանակաշրջանների մշակույթների /աշել, մուստերի, վերին պալեոլիթ/ ավանդական զարգացման փաստը խիստ կարեռ է ժամանակագրական և պատմագրական առումով:

#### Հ.Ա.ԱԶԻՋՅԱՆ

ՀՐԱՋԱՆԻ ԿԻՐՃԻ ԹԱՐՄԱՐ-ԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՒ

ԽՐԱՆՑՈՒՄ ԲԱԱԿՎՈՂ ՆԱԽԱՄԱՐԴԸ

1. Հայաստանի ընույթյան նվազ ուսումնասիրված երևույթներից մեկը քարայրում են: Արևելյան Հայաստանի քարանձավներում հոմինիդի ընակեցման ու նրա գործունեության փաստերը մեծ ուշադրության են արժանացել: Բահած մարդու էկոլոգիայի ուսումնասիրությունը անձավներում մշակույթ հետաքրքրել է նախադարյան հասարակությունն ուսումնասիրող պատմաբաններին ու հնագետներին:

2. Հայկական լեռնաշխարհը եղել է մարդու նախահայրենիքներից մեկը, որտեղ մարդը օթևանել է գետերի, լմերի, անտառների, կիրճերի շրջակայքում ընկած անձավներում:

Զափազրական տվյալները ցույց են տալիս, որ նրեան 1-ին անձավի կտրվածքներում երևացող առաստաղի որոշ հատվածներում պարզ նշմարում են մարդու կողմից մշակման հետքեր: Ամո-1 անձավում մարդու գործու-

Նեռւթյան հետքերը միջնադարից հասնում են պալեոլիթին։ Ձովունի անձավում հայտնագործված նյութերը ցույց են տալիս, որ անձավը օգտագործվել է նաև անտիկ և միջնադարյան էպոխայում։

3. Զարայրներն առաջացել են բնության տարերքի, ինչպես և մարդու գործունեռության հետևանքով։ Չեն բացառվում հողմնահարմամբ առաջացած դենուդացիոն մեղքածցներն ու նստվածքային անձավները։ Այդ անձավները կից են միմյանց, հարուստ նյութերով իրար մոտ թափած։ Բազալտյա քարայրները վատ են հողմնահարվում, նրանցում եղած նյութերը չեն մաշվում, ծածկվում են բարակ պատինայով, իսկ նստվածքային-հեյզերյան անձավներում նյութերը ինչպես և քարայրը շուտ են քայլայ-վում, քարայրը համախ վլկում է։

4. Հրազդանի կիրճը հարուստ է հնեամարդաբանական, հնեաբանական ու հնագիտական նյութերով, որոնք կարելի է համեմատել Տանգանիայում գտնվող Օլերովայան կիրճի քրածո նյութերի հետ։ Մարդանման էակի *Homo heidelbergensis*/ և կաթնասունների ֆուլիկացված ոսկորներ, գետաքա-րերից պատրաստված պրիմիտիվ աշխատանքային գործիքներ, որոնց վաղե-մությունը հասնում է 2,8-1,2 միլիոն տարվա։ Հրազդանի կիրճը մարդու Ֆիլոգենեզը լուսաբանելու խնդրում դեռ շատ կարևոր խնդիրներ ունի լուծելու։

5. Զարայր-կացարանների կուլտուրական շերտերից պեղվել են տար-եր էպոխաներին պատկանող գետաքարերից, լեռնապարներից /քաղալտ, վա-նակատ, պորֆիրիտ, կայծքար/ պատրաստված գործիքներ, թալիսմաններ, տուֆակերտ պաշտամունքային արծանիկներ ու ոելիթներ։ Գտնվել են նաև ընձառյուծի, լուսանի, ոնցեղջյուրի, եղջերուի այժյամի, կուլանի, գայլի, աղկեսի, մանր եղջերավորների ոսկորներ, բազմատեսակ կըր-ծողների կմախքներ։ Վերջիններիս իջրև կենդանի քարոմետրեր կլիմայի փոփոխման դեպքում կատարում են մեծ միգրացիաներ։ Հայտնաբերվել են տարեր գույների խոհանոցային և այլ ընույթի կավե անոթներ, ձիթա-մրագներ, ծիամոր մեր։ Տեղի մակրոլանցախտում հայտնաբերվել են մ.թ.ա. 4-9րդ հազարամյակներում մարդկանց փորագիր քանդակներ և այլ նյութեր։

6. Հրազդանի կիրճի այսերը մարդու գործունեռությունից էլ շատ վաղ մինչև այսօր հանդիսանում են քարայրա-ընաօջախային անթրոպոնոց և զոռնոց հիվանդությունների ծխացող վայրեր, որոնցում յուրաքան-չյուր տարի հիվանդանում են մարդիկ։ Մլակի խայթից քաղաքային տիպի մաշկային լեշմանիոզով հիվանդանում է մարդը։ Անթրոպոնոց և զոռնոց հիվանդությունների ծխացող օջախների հետազոտությունը նրեանի շեր-

շակայքում թույլ է տվել մեզ լրիկ համոզվելու, որ նախնադարյան շրջանում այդ ընաօջախային հիվանդություններով առկա անժակներում ենսակել է նաև նախամարդը:

7. Արևելյան Հայաստանի ղամբարաններից և քարանձավներից պեղ-ված զանգերը վկայում են, որ այդ տարածքում ընակվող հայտիպերը իրենց ֆիզիկական մոտենում են Անդրկովկասի ու Առաջավոր Ասիայի հարավային եվրոպիկների նմուշներին:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարդկանց քիչի տան-ձաճն անցքի բացվածքի եզրերը մեծ մասամբ սուր են՝ *Anthroporinae* կոչվող մեն է զերակշռում հայերի մոտ, հազվադեպ ինֆանտիլ մենց Գան-գերը մեծ մասամբ պինտապոնոիդ են, մյուս մենքը՝ էլիպսոիդ, օվորդ ավելի քիչ։ Ժակատային հատվածը ցածր է, ծակատոսկը երկար, զանգերի միջին տարրությունը 1400 սմ-ից ավելի։

8. Ժամանակից կրոմանյան տեսակի *Homo sapiens sapiens* շրագանի խորածորում հայտնաբերվել է Վերին պալեոլիթի պեղումներից Ամո-1 անձավում – այն ընակվել է Հայկական բարձրավանդակում, 20-40 հազար տարի և հազարամյակներ առաջ։ Տղամարդու կմախքի ոսկորները պատված են մանգանային և գույնի ղենարիտներով, որը վկայում է նրա-խիստ վաղեմի լինելը, որոշ ոսկորներ արդեն ֆոսիլիզացվել են, տասմ-ների մաշվածությունը չնշին, տասմանշարը ունի մի քանի արխայիկ հատ-կանիշներ՝ ստորին ժանիքը երկարմատ է ու մասսիվ, ստորին երկրորդ նախասեղանատամի էմալային կամրջակը կապում է վեստիբուլյար և լինզվալ թմբիկները, հիպոկոնվուսը խիստ զարգացած է, տասմաներում տարրողոններից-մը բացակայում է։ Գանգը բարձր, դեմքը նեղ։ Գանգի մեջ օվոիդ, 30-35 տարեկան։ Գանգային ինդեքսը 76,6 մեզոկրան, ակնակապիթները միջին, դրային եզրերով ցածր, քիչը դուրս պրծած, դեմքը գրացիլ, այտոսկրնե-րը բավարար դուրս պրծած։ Վերինօնքային աղեղները 2-րդ աստիճանի, ծոճրակի ուղինեմքը ոչ ուռուցիկ, ծոճրակային արտաքին թմբիկը 1-ին աստիճանի, ինիոնը չի արտահայտված, պոկածն ելուստները -2։ Ստորին ծնոտի երկարությունը հոդերից 108 մմ., երկարությունը անկյուննե-րից 84 մմ, մյուղերի բարձրությունը 61մմ ծնոտի հոդերի միջև ըն-կած լայնությունը 105 մմ բիզոնիալ լայնությունը 84 մմ։

Գանգի դեմքը չափազական՝ քանդակագործական եղանակով վերա-կանգնել է Գ.Վ.Լեթեղինսկայան, որի դեմքի ալվեոլար հատվածի պրո-ցեսսությունը լավ է արտահայտված։

Ա.ԴԵՄԻՐԱՎԱՆՅԱՆ  
/Արվեստի ինստիտուտ/  
Հ.ԱԶԻՔՅԱՆ

ԿՈՒՌԵՑՐ ՀԱՄՈ-1 ՔԱՐԱՑՐԻՑ

Համո-1 քարայրը գտնվում է Երևան քաղաքի մոտ, Հրազդան գետի կիրծում: Քարայրում՝ 1,1 մ. խորությունից սկսվում է մոտ 0,5 մ հաստություն ունեցող վաղ երկաթեղարյան շերաք /պեղող Հ.Ազիզյան/: Այն արտանյափած է քազմաթիկ մալաքարերից շարված, պարզ կտորուցվածքի օջախներով և բնորոշ խեցեղենով: Օջախների մոտ գտնվել են մոխրագույն և նարնչագույն փխրաքարից, ծիրանաքարից, մալաքարից և որմաքարից պատրաստված արձանիկներ, որոնք լինում են եռակող, քառակող կամ նեղ եղանյին նիստով եռանկյունածեն և կամ երկզուգանեռակողմ քառանկյունածեն և կոնածեն /քարճը. 7-20 սմ, 54 հատ/: Դրանք կուռքեր են, որոնց ուսումնասիրությունը որոշակի կարևորություն ունի քարայրի բնակիչների հոգևոր մշակույթի հետ կապված որոշ հարցերի պարզաբանման համար: Բոլոր այս կուռքերն ել մշակված են առավել կամ նվազ խնամքով: Նման այլաքանական իմաստ ունեցող շատ արձանիկներ առկա են նախնադարյան պաշտամունքային քանդակագործության նորանայտ նմուշների թվում, որոնց եռանկյունածեն հորինվածքի իմաստը ուսումնասիրության հատուկ առարկա է դարձել Ավանի կուռքի հայտնաբերման և ուսումնասիրության հանգամանքի հետ կապված /Դեմիրյանյան/: Համաձայն այս առնչությամբ կատարված վերլուծության, նման պատկերները բնորոշվել են որպես պատաքարերության աստվածությունների նշանակային վերարտադրություններ, որոնց բնորոշ են նաև պայմանական երկսեռությունն ընդգծող որոշակի մանրամասներ: Արական մասն այստեղ արտանայտում է տիեզերքի ուղղանայաց կառուցվածքի մասին եղած պատկերացումը, միաժամանակ առնչվեցով՝ ընության մեռնող և հարություն առնող աստծո կերպարի հետ: Իգական մասն արտանայտում է երկրի մայր աստվածունու պաշտամունքին հատուկ՝ կնոջ ունեցած երկնելու շնորհը:

Համո-1 քարայրի արձանիկների հարդարման մանրամասներն համապատասխանում են երկսեռ աստվածությունների արտանայտման առանձնահատկությունների մասաշման համար առաջարկված դասակարգման Ա խմբին:

Արձանիկների այս մեծ խմբի հայտնաբերումը հիմք է տալիս ենթադրելու, որ վաղ երկաթի դարում Համո-1 քարայրը եղել է սրբավայր: Այստեղ որպես կուռքերը կոչված են եղել երաշխակորելու կյանքի անընդմեջ նորացումը և ման ու վերածննունդը խորհրդական արարո-

Դությունների ժամանակ /անցման ծես/ ունեցել են կարևոր նշանակություն:

Արծանիկների այս հավաքածուն հնարավորությունն է ընձեռնում ավելի հաստակ առանձնացնել Հայկական լեռնաշխարհի Վաղ երկաթեդարյան այլ բարանական քաղաքագործության ավանդույթները:

Մ.Հ.ԱԼՔՈՒՅՑԱՆ

1. Ինչպես հայտնի է գանգի միջոցով ղեմքի մարդաբանական վերականգնման /պլաստիկական անտրոպոլոգիական ուեկոնստրուկցիայի/ համար մի շարք տեսական և գործնական նախադրյալների թվում, անհրաժեշտ է իմանալ նաև ղեմքի շրջանի փափուկ յուսվածաշերտի հաստության շափերը և նրանց հարաբերակցությունը նախադրյալի ուսկըային յուսվածքի ռելիեֆին:

Գրականությունից հայտնի է, որ վերոհիշյալ Խնդրի ուսումնասիրությամբ զբաղվել են առանձին մարդաբաններ և Վերականգնողներ /զերմանացի Շաֆիառզեն, Ֆրանսիացի Մարկլեն, Հկեյցարացի Կոլման, ամերիկացի Մակգրեգորը/, Փունդամենտալ աշխատանքներ են կատարել նաև ՍՍՀՄ ԳԱ Ազգագրության ինստիտուտի պլաստիկ վերականգնման լաբորատորիայում /Մ.Գերասիմով, Գ.Լեբեդինսկայա/:

2. Մեր կողմից կատարված սույն աշխատանքը, որը առաջարկված և ղեկավարվում էր պրոֆ. Ա.ժաղարյանի կողմից, հետամուտ է դեմքի շըրջանի փափուկ հյուսվածքների հաստության վերաբերյալ ստանալ ա/ընդ-հանրապես՝ մշգրիտ տվյալներ, հետազոտման մեթոդի հոկման, կատարելագործման և արդիականացման միջոցով. թ/մասնավորապես՝ տվյալներ շահամանակակից մարդու վերաբերյալ:

3. Հետազոտությունները կատարված են մեր կողմից մողիֆիկացված շտանգենցիրկուլի միջոցով, ասեղածակման մեթոդով։ Նման մեթոդի կիրառումը տալիս է ավելի ճշգրիտ տվյալներ դեմքի շրջանի փափուկ հյուսվածքների հաստությունների մասին, որը և դեմքի մարդաբանական վերականգնման ժամանակ, ընականաբար կտա ավելի հավաստի արդյունք։

4. Ասեղածակումները կատարված են դեմքի շրջանի հիմնական մարդաբանական կետերում: Կատարված հետազոտությունները դասակարգված են ըստ տարիքային և սեռային խմբերի, փորձելով ի հայտ բերել տարիքային առանձին խմբերին ու տարբեր սեռերին բնորոշ առանձնահատուկ

Նրբերանգները:

Հետազոտման արդյունքները մեզ հանգեցրին հետևյալ եզրակացուէ թյունների.

Ա. Փափուկ հյուսվածքաշերտի հաստությունները անկայուն են այտերի, թշերի, հարականջային, ենթածնոտային շրջաններում և փոփոխվում են տարիքի հետ կապված:

Բ. Փափուկ հյուսվածքաշերտի հաստությունները բավական կայուն են միջին գծում և տարիքի հետ կապված թիվ են փոփոխվում:

Գ. Տղամարդկանց մոտ ոսկրային ոխլինֆի ուժեղացմանը զուգահեռ հյուսվածքաշերտը հաստանում է:

Դ. Դեմքի շրջանի փափուկ հյուսվածքաշերտի ընդհանուր դիտարկումը ցույց է տալիս, որ կանանց մոտ այն ավելի հաստ է, քան տղամարդկանց մոտ:

Ե. Պատանեկան հասակում փափուկ հյուսվածքաշերտը ավելի բարակ է, քան երիտասարդական հասակում:

Զ. Եերունական հասակում նկատվում է դեմքի շրջանի փափուկ հյուսվածքաշերտի բարակում:

#### Է.Վ.ԽԱՆՋԱՆՅԱՆ

##### ԺՐԱՀՈՎԻՇԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1. Զրահովիտը, հիսակուրց, բազմաշերտ այդ հուշարձանը հազարամյակներ առաջ հաստատվել է աղբյուրներով հարուստ բերքառատ մի հովտում: Մոտ 12 մ բարձրությամբ ճկամկ հարթակով 6,5 հա մակերեսով այդ բլուրը գտնվում է Մասիսի շրջանում, Նրեանից 20 կմ հարավ և պեղվում է 1960թ. սկսած: Հիմնադրվելով դեռևս մ.թ.ա.4-րդ հազարամյակի վերջում, ընակատեղին հարատել է մինչև 18-րդ դ. ներառյալ:

2. Զրահովիտի վաղ բրոնզեդարյան տասնհինգ շինարարական հորիզոնները բնորոշվում են կլոր կացարաններով և բազմահրուստ նյութերով:

3. 1984թ. ոշնանը ընակատեղիի դեպի կենտրոն առածկող հարթակում պեղվել է վաղ բրոնզի դարաշրջանի երեք շինարարական հորիզոններ: Վերին երկուսում բացվել են ուղղանկյուն աղյուսակերտ շինությունների հատվածները՝ կենտրոնական օշակով, խեցեղենով և փոքրիկ գործիքներով հանդերձ:

4. Հատկապես ուշազրակ է 8-րդ հորիզոնի դեպի հարավ տարածվող

փողոցի աջ եզրում բացված, մոտ 7 մ տրամագծով կլոր կացարանը, պատի՝ տակ նստարանով և տարատեսակ արժեքավոր նյութերով:

5. Չորս անգամ վերականգնված հատակի վրա գտնվեցին ոսկրից և քարից պատրաստված գործիքներ, կավից ութ արծանիկներ, որոնց շաքրում ուշագրավ են ցլիկի մանրակերտ արծանիկը, գիռ և ոչխարի արծանիկների մասերը:

Անակնկալ էր կացարանի կենտրոնում բացված փայտե պատզարակով ուշ քրոնզի դարաշրջանի թաղումը, որն ուղեկցվում էր սարդիոններով և մածուկներով, ծովային խեցիներով, քրոնզի զարդարուն սկավառակածե մասսիկ հերազարդով եղջյուրատիպ ծավալային իրերով, խեցեղենով, խոշոր և մասր եղջերակոր կենդանիների զոհաքերությամբ:

#### Ռ.Ս.ՔԱՂԱԼՑԱՆ

#### ԿԱՐԱՌՈՒՏԻ ՊԵՂՈՒՄՄԱՐԻ ՀԻՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Կառնուանի Վաղքրոնքեղարյան միաշերտ ընակատեղին զբաղեցնում է Ս.Մինաս լեռան արևմտյան և հարավային լանջերի ստորին հատվածը: Մշակութային շերտի նզորությունը կազմում է մոտ 1 մ: 1983-1984թթ. ընթացքում պեղված 100 քառակուսի մետր մակերեսով հրապարակում բացվել է քարից շարված ուղղանկյուն կացարան /28 քառակուսի մետր մակերեսով/, որն իր անկյուններով կողմնորոշված է ըստ երկրի կողմերի: Շինուալի կառուցված է արհեստական հարթակի վրա և գրեթե ամբողջությամբ պահպանել է իր ինտերի յերը: Կենտրոնում հատակի մեջ փորված օջախի վրա դրված էր պայտաձև հենակ՝ զարդարված զույգ խոյերի քանդակներով: Հենակը ուղղված է հարավ-արևմուտք, հավանաբար դեպի մուտք /կացարանի համապատասխան պատը չի պահպանվել/: Հյուսիս-արևելյան պատին զուգահեռ շարված էին չորս կարասներ:

2. Հայտնաբերված խեցեղենը երեք տիպի է. կոպիտ խոհանոցային, մթերքների պահպատակորմանը ծառայող խոշոր անոթներ և քրոքարվեստ ամանեղեն: Վերջին խմբում զգալի տեղ է զբաղեցնում կարմիր փայլեցրած խեցեղենը: Համախ են հանդիպում նաև երեք կանթանի սափորներ: Գրեթե ամբողջ ամանեղենի զարդամոտիվները վերաբերվում են գծաերկրաշափական ոմին:

Կացարանում հայտնաբերված կենդանակերտ հենակը հավանաբար ծառայել է ընտանիքի օջախի պաշտամունքին: Նմանատիպ, սակայն անհամե-

մաս ավելի փոքր չափերի շարժական հենակ գտնվել է 1983թ. ընակատեղի մշակութային շերտում: Այս զատածոները միաժամանակ հանդիսանում են վաղքոնզեղարյան արվեստի ուշագրավ նմուշներ:

1983-1984թթ. պեղումների ընթացքում, ինչպես կացարանի ներսում, այնպես էլ նո.1 պեղավայրի տարածքում հայտնաբերվել են օբյեկտանից, կայծքարից, գետաքարից, որմաքարից տարբեր տեսակներից պատրաստված գործիքներ: Մեծ մասամբ նրանք երկրագործական գործիքներ են, որոնց մի մասը հայտնաբերված է ՀՈ ՏԵՇ կացարանում: Գործարարա-հետքարանական անալիզի տվյալների համաձայն ոչ պակաս լայն տարածում են ունեցել նաև մետաղամշակության և մետաղագործության հետ կապված քարե գործիքները: Հարկ է նշել նաև կավե կաղապարի բեկորի առկայությունը այս համալիրում, որն ըստ երևույթին, ծառայել է ճուլակտորների ստացմանը:

3. Կացարանում հայտնաբերված նյութի ուսումնասիրությունը թույլ է տալիս այս համալիրը թվազգել վաղքոնզեղարյան մշակութի գարգացման ուշ փուլերով:

#### 4.Ն.ԱՐԵՇՅԱՆ

/ԵՊՀ/

ՀԱՄԻՒԱՄ ՀՈՒՅԱՐԱՆԱՄՐԻ ՍԻՍՏԵՄԻԿ

ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՏԱՏԱՐԹԱԿԸ

1984թ. լրացակ ԵՊՀ-ի հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի արշավախմբի կողմից Աշտարակի շրջանում կատարվող Շամիրամի հուշարձանախմբի սիստեմատիկ պեղումների տասնամյակը: Այդ աշխատանքների ընթացքում ոչ միայն էպական համալրվել է Հայաստանի վաղ ժամանակաշրջանի հնագիտության աղբյուրագիտական հիմքը այլև ծշտվել կամ վերանայվել են այդ կարևորագույն հուշարձանախմբի մասին նախկինում արված ենթադրությունները: Պարզեց, որ առաջին հետազոտողների /Խ. Լալայան, Թ. Թորամանյան, Խ. Սամուելյան և ուրիշներ/ կողմից շատ վաղ ժամանակներին վերագրված Շամիրամի հիմնական դամբարանաղաշտի այլունաձև կողմող-մենագրերը դամբարանների եզրին կանգնեցված ննջեցյալների սիմվոլիկ պատկերներ են, որոնք հիմնականում պատկանում են վաղ երկաթեղարին իրենց նախատիպերն ունենալով Հայաստանի միջին և ուշ բրոնզեղարյան հնագիտական տարբեր մշակությներում ներկայացված դամբարանը ուրեների գաղթներին կանգնեցված կողողներում /պիրովական, Ավազաբլուր, Քանազեղի/։ Համիրամի քաղաքանեղին ուրարտական մշակու-

թին նախկինում վերագրված /Հ.Ա.Մարտիրոսյան/ Նյութերը իրականում պատկանում են անտիկ ժամանակաշրջանին:

Նամիրամի Մեծ դամբանաքլուրների խումբը վերաբերվում է ուշ բրոնզեդարի վաղ փուլին և թվագրվում է մ.թ.ա. 15-14-րդ դդ.Շ Դրանք ունեցել են ուշագրավ կառուցվածքի թմբեր և քարաշեն դամբանաքրաններ, որոնք հնում կողոպավել են: Սյունանդերձ գտնվեցին փայտե կառուցվածքների մնացորդներ, միտաննիական գլանածն կնիք և խեցեղենի ուշագրավ նմուշներ: Նամիրամի Մեծ դամբանաքլուրները ներկայացնում են տիպաբանական այնպիսի տարրեր, որոնք ուսումնասիրվող հուշարձնախըմքում պահպանվել են ներառյալ վաղ երկաթեդարը և մշակութային ուրուցնամալիր են կազմել:

Նամիրամի հիմնական դամբանադաշտում պեղվել է մ.թ.ա. 11-9-րդ դարերի մոտ 50 դամբարան, որոնց նյութերը կարևոր նշանակություն ունեն թաղման ծեսերի ու դամբարանային մարտարապետության /տարբեր տիպերի դամբարանային կառուցվածքներ, դիաֆանման տարբեր եղանակներ, կենոտաֆներ, պահնդական արարողությունների հետքեր և այլն/, մոնումենտալ կերպարվեստի /հարթաքանդակներ, մարդակերպ և ֆալլոսածն կլոր քանդակներ/, երկաթի արտադրության տարածման օրինաչափությունների և այլ հարցերի ուսումնասիրության համար:

Նամիրամի քաղաքատեղիրում, որի տարածքը ընակեցված էր նեռևու միջին բրոնզեդար յան կարմիրերդյան մշակությի կրողների կողմից պեղվել են ուշ բրոնզեդար յան կամ վաղ երկաթեդար յան մոնումենտալ կառույցներ, պաշտամունքային շինություններ, ընակարանների հետքեր: Թաղաքատեղին կործանվել է մ.թ.ա. 9-րդ դարի երկրորդ կամ 8-րդ դարի առաջին կեսին: Միաժամանակ դաշտարել է նաև հիմնական դամբարանադաշտի գործառությունը: Տևական ընդմիջումից հետո վաղ երկաթեդար յան քաղաքատեղի տարածքում առաջցել է անտիկ ժամանակաշրջանի ոչ քաղաքային տիպի ամրոց-բնակավայրը, որի պեղումները բացահայտել են շինարարական երկու հորիզոններ և նրանց պատկանող թաղումների Ամրոց-բնակավայրի վերին հորիզոնը վերաբերվում է մ.թ.առաջին դարերին:

Անցած ապանամյակի ընթացքում /1975-1984թթ./ ուսումնասիրվող տարածքում հետախուզական պեղումներ են կատարվել Ավան գյուղից արևելք գտնվող Զյանքերդ ամրոց-բնակավայրում, որտեղ ուսումնասիրվում էր ամրոցաշինական համակարգը և բացվեցին ընակելի խոշոր կառույցներ: Զյանքերդի հետագա հետազոտությունը կարևոր է շենգավիթյան մշակութի զարգացած և ուշ փուլերի լեռնային ընակավայրերի կյանքի լուսաբանման համար:

Նամիրամ, Արութ և նոշ զյուղերի շրջակայքում պեղվել են միջին ըրոնգեղար յան թռեղց-կիրովականյան հնագիտական մշակույթի դամբարանաբուրներ, որոնց հիմնանողային դամբանաբուրներում թաղումային հարուստ գույքի /ոսկե/ և արծաթե զարդեր, քրոնգե զենքեր և անոթներ, իշխանության խորհրդանշիչներ, գունազարդ և սև փայլեցված խեցելեն, զուարերկած կենդանիների մասցրդներ և այլն /հետ մեկտեղ գտնվեցին դիակիզման արարողության հետքեր/: Պարզում է, որ Արագածոտնը այդ մշակույթի զարգացման կենտրոններից մեկն էր: Արութի դամբանատեղիում պեղվել է նաև միջին ըրոնգեղարի ավելի ուշ շրջանի մշակույթ ներկայացնող քարարկղային դամբանախցիկ: և դիաթաղման հետքերով Ց-րդ դամբանաբուրը, որտեղ հայանաբերկել են քազմագույն խեցելեն, զենքեր, զարդեր և այլն:

Հ.Ռ.ՍԻՄՈՆՅԱՆ  
/ԵՊՀ/

ՏԱՄԻՐԱՄԻ ՔԱՂԱՔԱՏԵՂԻԻ 1-ԻՆ ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ  
ԾՎԱՍՎԱՆԻ 1983 թ. ՊԵՂՈԽԱՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԵՊՀ-ի հնագիտական արշավախումբը շարունակում է Աշտարակի շըրջանի Նամիրամ հնավայրի սիստեմատիկ հաշտային ուսումնասիրությունները: 1989թ. քաղաքանաբեղի 4-րդ և 5-րդ պարիսպների միջև դրվեց 1-ին շերտագրական տեղամասը 100ք.մ. ընդհանուր մակերեսով /10մ × 10մ/, որն իր հերթին բաժանվում էր 4 քառակուսիների՝ 5 մ × 5 մ:

Շերտագրությունը ստույգ պարզելու նպատակով կիրառվեց պեղումների հետևյալ մեթոդը: Նյութը հավաքվում և մշակվում էր ամբողջությամբ: Խեցելենի ցանկացած բեկոր, անկախ չափսից ընդունվում էր որպես մեկ միավոր: Որպես մեկ միավոր էին ընդունվում նաև նույն կապանոթի բեկորները: Ցուրաքանչյուր 20սմ խորությունից հայտնաբերված ողջ նյութը հաստատագրվում էր, դասակարգվում ըստ ժամանակա-2ըրջանների: Որոշվում էր տարբեր մշակույթների խեցելենի բացարձակ քանակը և նրանց տոկոսային հարաբերությունը ըստ քառակուսիների և ամբողջությամբ վերցրած: Նույն զործողությունները կրկնվում էին հաջորդ 20 սմ խորությունից հայտնաբերված նյութի հետ, ապա համեմատվում էին ստացված արդյունքները: Շերտի հզորությունը և ժամանակա-2ըրջանը որոշվում էր ըստ խեցելենի բացարձակ տոկոսի բարելության, հստակ սահմանագծվող հորիզոնների և հատակների, ինչպես նաև կառույցների հատկանիշների և շինարարական տեխնիկայի:

Անալիզի են Ենթարկվել կավանոթների մի քանի հազար քեկորներ, որոնց պատկանում էին 4 ժամանակաշրջանների. ուշ միջնադարյան, անտիկ, վաղ երկաթի և ուշ բրոնզի: Ստացել ենց հետևյալ պատկերը:

1. Կերին շերտ-խորությունը 5-10 սմ, կազմված էր քույսների արմատներից և կավահողից: Հանդիպում էին ուշ միջնադարյան, անտիկ և վաղ երկաթի դարի խեցեղենի նմուշներ, խիստ քեկորային վիթակում: Գերակշռում է անտիկ խեցեղենը:

2. 1-ին շին. հորիզոն - խորությունը 10-50 սմ, կազմված էր քացգույնի, փափուկ փոշենման հողից և քարերից: Նյութը - ուշ միջնադարյան, անտիկ և վաղ երկաթի դարի խեցեղենի քեկորներ, չնչին քանակությամբ աշխատանքային գործիքներ և ոսկրաբանական զատածոների: Գերակշռում է անտիկ խեցեղենը:

Ճարտարապետությունը - A և B քառակուսիներում քացվեցին քարշեն զլանածն հորեր, որոնք հետագայում օգտագործվել էին անտիկ թաղումների համար: Նույն ժամանակաշրջանի մեկ այլ թաղում քացվեց քառակուսում, վաղ շրջանի մոնումենտալ կառույցի մուտքի մեջ: Հավանաբար այս ժամանակաշրջանին է պատկանում նաև նույն մոնումենտալ կառույցի մեջ միաշարք, մեղքված որձաքարերի կառուցված ուղղանկյուն հատակագծով փոքր սենյակը:

3. 2-րդ շին. հորիզոն - խորությունը 50-130 սմ: Վերին շերտի համեմատությամբ հողի գույնն ավելի մուրգ է, իսկ հողի մեջ խառնված քարեր ավելի հազարեակ են հանդիպում: Շին հորիզոնի ստորին սահմանը մասամբ ընական ժայռ է, մասամբ լավ տոփանված և հարթեցված հողե հատակը, մասամբ սալահատակը: Նյութը - անտիկ, աքեմենյան /~/ և վաղ երկաթի դարի խեցեղեն, փոքր քանակությամբ աշխատանքային գործիքներ, որձաքարե սկիհի քեկոր, ոսկրաբանական նյութ: Գերակշռում է վաղ երկաթի դարի խեցեղենը:

Ճարտարապետությունը - BC և D քառակուսիներում արածվում է վերոհիշյալ մոնումենտալ կառույցի հարավ-արևմտյան հատվածը: 170սմ հաստությամբ պատերը ունեն եռամաս կազմվածը - երկու եզրերից շարված են մակատները մշակված մեծ որձաքարերով, իսկ նրանց արանքը քարահողային լիցք է թափված: Մոււաքն ուղղված է հարավ-արևմուտք, իսկ նրա մեջ գտնվում է տուֆից պատրաստված գուռ: Կառույցի արևելյան հատվածը սալահատակված է, իսկ պատի տակ կառուցված է մասուրք: A և B քառակուսիներում գտնվում են այլ կառույցների երկմաս կազմությամբ պատերը: Բոլոր շինություններն ունեն ուղղանկյուն հատակագիծ:

4. Յ-րդ շին. հորիզոն-խորությունը 130-180 սմ: Հանդիպում է միայն **B** և Ֆ քառակուսիներում: Կազմված է սև գույնի լավ տոփանված հողաշերտից: Նյութը - անտիկ, վաղ երկաթի և ուշ բրոնզի դարի խեցեղեն, աշխատանքային գործիքներ և մեծ քանակությամբ քեկորատված ոսկրաբանական նյութ: Այս հորիզոնից ներքեւ տարածվում է տուժե քարածայուը:

Ճարտարապետությունը - քացվել են մելը մյուսի վրա դրված պատեր երկմաս կառուցվածքով և ուղղանկյուն հատակագծով:

Հրվանդանի տարածքը ընակեցվել է դեռևս մ.թ.ա. 3-րդ-2-րդ հազարամյակների սահմանագլխին / հայտնաբերվել են կարմիրքերդյան մշակույթի գուլնազարդ Խեցեղենի քեկորներ /, սակայն Շամիրամի քաղաքատեղին պեղված տարածքում ունի Յ հիմնական շինարարական հորիզոն.

ա/ ուշ բրոնզի և վաղ երկաթի համատեղ շերտ / 130-180 սմ /,

բ/ վաղ երկաթի շերտ, որը մեծ չափով խախտվել է անտիկ ժամանակաշրջանում / 50-130 սմ / և զ/ անտիկ ժամանակաշրջանի շերտ / 10-50 սմ /:


#### Ա.8.ԳԵՎՈՐԳՅԱՆ

#### ԹԱՐԱԾՄՄԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԱԴԵՏԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1983-1984թթ. Քարաշամբի դամբարանադաշտում պեղվել է 800-ից պելի դամբարաններ: Պեղված դամբարանների մեծ մասը թվազրկում են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանով և միայն մի ոչ մեծ խումբ պատկանում է միջին բրոնզի ժամանակաշրջանին:

Բոլոր դամբարանները հիմնահողային են, ուղղանկյունաձև, ունեն տարբեր ուղղություններ և շրջապատկած են կրոմլեխով / տրամագիծը հիմնականում 3-3,5մ, սակավ՝ 11-12 մ /: Նրանք ծածկված են քաղաքաց սալերով, որոնք ամրացված են փոքր քարերով: Դամբարանների մեծ մասը դեռևս հնում կողոպատկել է, թաղման ծեսը խախտվել: Համար դամբարաններում քացակայում է ննջեցյալի կմախըթ՝ Պահանված կմախքներից պարզվում է, որ ննջեցյալը պառկեցվել է աջ կամ ձախ կողքի կծկված վիթակում և նրա հետ դրվել են սակագաթիկ նյութեր, հիմնականում խեցեղեն, երեխմն պղնձից, բրոնզից, ոսկրից և քարից պատրաստված իրեր:

Պեղվածների շարքում հատուկ ուշադրության են արժանի միջին բրոնզի տարբեր փուլերով թվազրկող դամբարանները՝ թվով վեցը: Նրանք երենց արտաքին մեռու և չափերով գրեթե չեն գանգանվում նույն դամբարանադաշտի պեղված ուշ շրջանի բաղումներից: Կողոպատկելու գառմա-



ոռկ թաղման ծեսը խախտված է: Ուղեկցող նյութը միայն խեցեղենն է:  
Դրանք թագաքենոյան /Կարմիր-Քերոյան/ տիպի գունազարդ, ինչպես նաև  
որոշմիջոկ զարդանկարված քարձրարկեստ սև փայլեցրած կավամաններ են,  
որոնց կարող են թագրվել Մ.թ.ա. 20-18-րդ դդ.:

Վ.Է.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
/Հրեբունի թանգարան/  
ՄԵՏԱՂԵՑ ԻՐԵՐ ՇԱՐԱՋԱՄԻ ԴԱՄԲԱՐԱՄՊԱՇՏԻՑ

1981-1983թթ. ընթացքում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր  
հուշարձանների պահպանման ու օգտագործման վարչության հազիտական  
արշավախումբը պեղումներ կատարեց ՀՍՍՀ Նախրիի շրջանի Քարաշամբ  
գյուղի մոտակայքում գտնվող դամբարանաղաշտի հարավային հատվածում։  
Պեղվել են մոտ 200 հիմնահողային սալածածկ դամբարաններ, որոնց 8  
ժամանակագրական փուլեր են ընդգրկում՝ միջին քրոնգի, ուշ քրոնգի  
և վաղ երկաթի։

Դամբարաններից հայտնաբերվել են քազմատեսակ գունազարդ, սև  
փայլեցրած ու „խոհանոցային” կավանոթներ, տարբեր իրեր մետաղից,  
ոսկրից, շաղախից, ապակուց, ընդ որում մետաղյա իրերը վերաբերում  
են վերջին երկու փուլերին։

ՄԵՏԱՂԵՑ ԻՐԵՐԸ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԲԱԺՁԱՆՎՈՒՄ ԵՆ ԵՐԵՑ ԽՄԲԻ:

Առաջինը կազմում են սակավաթիվ աշխատանքային գործիքները՝  
երկաթե դանակներն ու կեռ մանգալները, որոնք գտնվել են երրորդ  
փուլին վերաբերող դամբարաններից /Մ.թ.ա. 2-1-ին հազարամյակների  
սահմանագիծ/։ Նույնատիպ գործիքների օրինակներ հայտնի են Հայաս-  
տանի վաղ երկաթի դարի հնավայրերից /Թաքիա, Լճաշեն, Արթիկ, Դիլի-  
ջան, Աստլիթըլուր, Բջնի, Սարուլան և այլն/։

Երկրորդ խումբը կազմում են սպառազինության առականները՝ տար-  
բեր տիպի քրոնգե դաշտույնները, նետասլաքներ, գրահակոմակներ։ Ուշա-  
գրակ է երկրորդ փուլի վաղ շրջանով /Մ.թ.ա. 14-18-րդ դդ./ թվագըր-  
վող միաձույլ քրոնգե դաշտույնը, որի հետ միասին գտնվել է յուրօրի-  
նակ կառուցվածքով քրոնգե պատյան։

Ուշ քրոնգի վերջին փուլին ու վաղ երկաթի դարին վերաբերող  
դամբարաններից հայտնաբերվել են ցանցկեն գլխիկով ու գոտեկապերով  
սևանյան տիպի դաշտույններ։ Զինագործական արկեստի այլ նմուշներից  
են ուռուցիկ կենտրոնական ողերով տափակ նետասլաքները։

Մետաղյա իրերի երրորդ խմբի մեջ են մտնում զարդերը։ Նրանց թը-  
կում ուշագրավ են ուշ բրոնզի վաղ փուլին վերաբերող բրոնզե մեծ  
զարդարուն շքասեղները։ Սրանցից բացի, դամբարանաղացտից հայտնաբեր-  
վել են քազմաթիկ մասսիկ ու թիթեղյա ապարանչաններ, մատանիներ, կա-  
խիկներ, շղթաններ, ականջօղեր, մարմաններ, ուլունքներ, վզնոցներ,  
հերակալներ, մակատակալ բրոնզից ու անագից։

Զարդերի թկում կան նաև թոշնակերպ և արևի սկավառակի տեսքով  
կախիկ-հմայիլներ՝ բրոնզից և ծարիրից։ Նույնատիպ զարդերի բազմաթիվ  
նմուշներ հայտնաբերվել են Հայաստանի ուշ բրոնզի ու վաղ երկաթի դա-  
րաշրջաններին վերաբերող հուշարձաններից։

Մետաղյա իրեր պարունակող թարաշամբի հնագիտական համալիրների  
ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայտնաբերված նյութը բազ-  
մաթիվ գորգահեռներ ունի Հայաստանի համաժամանակյա շատ այլ հնագի-  
տական հուշարձաններում և, ուրույն տեղ զբաղեցնելով նրանց շարքում,  
իրար է կապում Արթիկի, Լոռու, Սևանի ավազանի և Արարատյան դաշտա-  
վայրի նյութական մշակույթները։

### Ա.Հ.ԴԵՎԵԶՑԱՆ

ԹԱԳԱՆԻՐ ԻՇԽԱՆԱՎՈՐԻ ՊԱՏԿԵՐԸ ՀՈՒՒ ԲՆՐԴԻ

ԲՐՈԽՁԵԴՐԱՑՑԱՆ ԲՆԱԿԱՎԱՑՐՈՒՄ

Լոռի-քերդի նախնադարյան ընակավայրը գտնվում է դամբարանաղաշ-  
տից ոչ հեռու, Միսիանա գետի ծախ ափին՝ քարձրաղիր սարահարթի վրա,  
որտեղ պահպանվել են հաստանեղյուս պատերով շառանկյունածն կիկլոպ-  
յան կառույցների հիմքերը։ Բնակավայրը հիմնադրվել է միջին բրոնզի  
դարաշրջանում և ընակեցվել մոտ մեկուկես հազարամյակ անընդմեջ։  
Այստեղ, հետագյում ապաստանել են նաև միջնադարյան Լոռե քաղաքի  
ընակիլները։

Վերջին տարիներս նո.3 ընակարանի կենտրոնում 30սմ հաստու-  
թյուն ունեցող խառը շերտից հայտնաբերվեց սև փայլեցրած, վարդա-  
գույն աստառով միջին բրոնզեղարյան խեցու փոքրիկ բեկոր։ Սրա Վրա  
փորագրված է մարդկային գլուխ կիսադեմով, որը կրում է ցածր և սը-  
րածայր ատամներով թագ՝ վերևում եռաթերթ փոքրիկ շուշանով։ Գլուխ  
ետևից մինչև կիզը իջնում է մակատին կապված ժապակենը։ Կիզը բար-  
ձըր է, գծածածկ։

Ակնայա է, որ պատկերված է բարձրաստիման անժնավորություն,

առաջնորդ, թագակիր իշխան կամ առևվազն քրմապետ: Վերջինիս օգտին է վկայում մասավանդ թագի Վրայի շուշանը կամ լոտոսի ծաղիկը, որը ըը-նորոշ էր քրմական դասին: Սա չի բացառում սակայն ազնվազարմ անձի հասարակական-քաղաքական քարծր դիրքը, գուցե և առաջնորդ /ցեղապետ/ լինելը:

Պատկերը արժեցավորվում է հատկապես բեկորի վաղ ընույթի շը-նոր հիվ, թանի որ մինչև այժմ, մ.թ.ա.2-րդ հազարամյակի 1-ին կեսին պատկանող որևէ փաստական նյութ կամ տեղեկություն չունենք, որ հաս-տատեր Հայաստանի նյուსիսային գավառներում և ընդհանրապես Հայաստա-նում թագակիր իշխանի կամ թագավորի գոյության փաստը: Հնայած մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներից հայկական լեռնաշխարհի նյուսիսային մա-սերում կատարված սոցիալ-տնտեսական և մշակութային հսկայական տեղա-շարժերը, հարստության կուտակումն ու հասարակության շերտավորումը կայուն հիմք էին ստեղծել պետականության առաջացման համար, մաս-կանդ, որ հարեւան երկրներում դրանք արդեն գոյացել էին և Հայաստանի հետ նրանց կապը բավական սերտ էր: Այդ են վկայում բարձրասահման ան-հատների համար կառուցված թոեջքի ու կիրովականի հսկայածավալ դամբա-նարդուրները, ճարտարապետական բարդ կառուցվածքով: Ննջեցյալի ամյու-նի հետ դամբարան են իջեցվել նրանց օգտագործած իրերը՝ ոսկե և արծա-թե գեղարվեստորեն զարդարված սպասքը, շքեղ հագուստն ու թանկարժեք զարդերը, հմտորեն զարդարված գունազարդ և սև փայլեցրած խեցեղենը, գենցերը, կառքերով ու զոհված կենդանիներով հանդերձ:

Ստամնավոր թագեր թեև համախ չեն հանդիպում հինարևելյան հու-շարժաների վրա, սակայն մոտավոր նմանությամբ թագեր ու գլխարկներ են կրել Միջազգեացի աստվածուհիներն ու քրմուհիները 2800-2500թթ. մ.թ.ա./, զորահամանատարները /մ.թ.ա.3-րդ հազ. Վ.2-րդ հազ. սկ./, խեթերի թագավորները /մ.թ.ա.14-րդ դ.:/: հնչ Վերաբերում է թագավո-րական ժապավենին, ապա այն ավելի համախ երևում է խեթ թագավորների, աստվածների ու քրմերի գլխին: Բեկորի Վրա պատկերված իշխանավորի գլուխը հիմք է տալիս խոսելու մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կե-սում Հայաստանում գոյություն ունեցող քաղաքական միավորումների մասին:

ՊԵՂՈԽՄՆԵՐ ԶՈՒՀԱԿՈՒՄ

1. Թուշակ 1 ամրոց ընակատեղին գտնվում է համանուն գյուղից 5կմ դեպի հյուսիս-արևելք։ Այն զբաղեցնում է մոտ 3 հա տարածություն։ Ստորգողական փոստակների միջոցով պարզված է, որ այստեղ կյանքը սկիզբ է առել մ.թ.ա.8-րդ հազարամյակում և հարատել է մինչև մ.թ.ա. 1-ին հազ. կիսերը։ Այնունեած այստեղ ընակրություն են հաստատել 16-17-րդ դարերում։

2. Ամրոց ընակատեղիի դամբարանադաշտը գտնվում է նրա հյուսիսային և հյուսիս-արևելյան կողմերում և զբաղեցնում է մոտ 20հա։ Այստեղի դամբարաններին տիպական են կրոմլեխները /3-6մ չափերի/։

3. Դամբարանանցերը ծածկված են 2-4 բազալտ անմշակ սալերով։ Դամբարանների երկայնական պատերը շարված են երկուական անմշակ սալաքարերով, իսկ լայնականները հիմնահղային են, որոնցից հարավ-արևմտյանները կառարել են մուտքի դեր, թաղումից հետո լրանք շարվել են փոքր քարաքեկորներով։ Դամբարանանցերը ոչ մեծ չափերի են /երկարությունը 1,1-2մ, լայնությունը 0,8 - 1,2 մ/ և ունեն ուղղանկյուն հատակագիծ։ Նրանց կողմնորոշված են հյուսիս-արևելյալը հարավ-արևմուտք ուղղությամբ։

4. Դամբարանները իրենց պարունակած նյութերով /խեցեղեն, քրոն-զե առարկաներ/ զբեթե միատարր են, բացառությամբ երկուսի։ Դամբարան նո.21-ուժ բացի վերոհիշյալներից հայտնաբերվեցին նաև ծիերի ոսկորներ և բրոնզե սանծ, իսկ դամբարան նո.31-ում երկու ծիերի զանգեր, սանծերը բերանին։ Նրանցում հայտնաբերվեցին նաև դաշույններ, զուրգ, նիզակի ծայր, խարսխանձ պատվանդանի վրա կանգնեցված, իրենց առանցքի շուրջը պտտվող երեք թոշուններից կազմված արձանախումբ և տարատեսակ զարդարանցի առարկաներ։ Դամբարանային նյութերի նման տարբերությունը ցույց է տալիս հանգուցյալների տարբեր իսկերին պատկինելը։

5. Դամբարաններից հայտնաբերված նյութերի նախնական ուսումնասիրությունը հարավորություն է ընծեռում նրանք թվագրելու ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակով։

6. Թուշակ 2 ամրոցը գտնվում է գյուղից մոտ 500 մ դեպի հյուսիս արևմուտք և զբաղեցնում է մոտավորապես 0,6 հա տարածություն։ Նրա ժամանակագրական պատկանելությունը դեռևս պարզված չէ։

7. Ամրոցի դամբարանադաշտը գտնվում է նրա հարավ-արևելյան

**Կողմում:** Այստեղ պեղկած հինգ դամբարանները կրոմլեիներով /2,5-6,8 մ շափերի/ սալարկութեր են: Դամբարանները ոչ մեծ շափերի են երկարությունը 1,1-2 մ, լայնությունը 1-1,2 մ, խորությունը 0,6-1,2 մ/ և ունեն ուղղանկյուն հատակագիծ: Նրանք կողմնորոշված են հյուսիս-արևելք հարավ արևմուտք ուղղությամբ:

8. Դամբարաններից հայտնաբերված նյութերը /խեցեղեն, երկաթից, բրոնզից, քարից ու շաղախից պատրաստված առարկաները/ պատկանում են վաղ երկաթի ժամանակաշրջանին:

**Ա.Ս.ՓԻԼԻՊՈՍՅԱՆ  
/Երեքունի թանգարան/**

**ՊԵՂՈՒՄՆԵՐ ՎԱՄՊՈՅԻ ՇՐՋԱՆԻ ՍԱՐՈՒԻԱՄՆ ԳՅՈՒՂՈՒՄ**

Երեանի հիմնադրման պատմության ,՝Երեքունի’’ թանգարանի հնագիտական արշականումը 1983-84թթ. պեղումներ կատարեց Հայկական ՍՍՀ Կամոյի շրջանի Սարուիան գյուղի հյուսիս-արևելյան ծայրամասում, ,՝Պալի-տակ’’ կոչվող բլրի ստորոտին, ուր շինարարական աշխատանքների ժամանակ բացվել էին վաղ երկաթի դարաշրջանի դամբարաններ:

Հետազոտվեցին և պեղվեցին բազալտե նոշոր քարաքեկորներից կառուցված, հիմնականում ուղղանկյուն հատակագիծ ունեցող և խմբակային թաղումներ պարունակող 17 սալարկության դամբարաններ, որոնք շունչին որոշակի դիրքորոշում և բլրի ստորոտում տեղադրված էին կամայականորեն՝ իրարից 8-10մ հեռավորության վրա: Հիմնականում 1,5-2,5 մ լայնք, 3,5-5,5 մ երկարություն և 2,0-2,5 մ խորություն ունեցող դամբարանները ծածկված էին 3-4 նոշոր բազալտե սալերով և դամբարանական ամփոփում էին 3-32 կմախճներ: Ըստ որում կմախճների դասակրությունը խիստ անկանոն էր և մտածել է տալիս նույն դամբարանում պարբերաբար կատարված համաժամանակյա թաղումների մասին:

Սարուիանի դամբարանադաշտի հնագիտական նյութը կազմված է խեցեղենից, մետաղ աշխատանքային գործիքներից, զենքերից ու զարդերից, ոսկրե ու խեցե իրերից և բազմաթիվ ու բազմապիսի ուլունքներից:

Խեցեղենի մեջ հիմնականում մտնում են սև փայլեցրած կամ գորշ մեծ ու փոքր խոնացային թաղարներ, սեղանածե քոնակներով անոթներ, ուռուցիկ իրանով անկանթ, միականթ և երկանթ կմումներ, երկարավիզ միականթ սափորներ, մեծ ու փոքր քրեղաններ ու զավաթներ. զարդարված՝

վերադիր և ակոսավոր, համախ նաև փայլեցման եղանակով արգած ուղղահայաց և հորիզոնական գծերով, եռանկյունիներով, ալիքավոր և եղունգազարդ գոտիներով, մատնեցներով և այլն։ Հատկապես աչքի է ընկնում նո.15 դամբարանից հայտնաքերպած սպիտակ-արծաթափայլ ջնարակված քածկը, զարդարված ակոսավոր եռանկյունիներով։ Ուշագրավ են նաև նո.11 և նո.17 դամբարաններից հայտնաքերպած ընկուզածն ամաները, որոնց, ինչպես ցույց է տալիս Սարուխանի հնագիտական նյութը, շարունակել են գոյատել նաև ուշ բրոնզից վաղ երկաթի անցման ժամանակաշրջանում։

Հնագիտական մետաղը ներկայացված է բրոնզե նեղ գոտիներով, զավացնի գլխով, միածույլ և սևանյան տիպի բրոնզե և երկաթե դաշույններով, դանակներով ու նիզակներով, նետասլաքներով, հոծ-ոլորուն վզնոցներով, ասամնավոր կամ հարթ ապարանչաններով ու բազկակալով, ցանցկեն թունքարդերով, բուժմիկներով ու թոշուն-կախիկներով, մատանիներով, ականջօղերով, շքասեղներով բրոցներով ու բգերով, կիսակլոր կոմակներով և այլն։ Հատկապես ուշագրավ է նո.10 դամբարանից հայտնաքերպած ծարիրե տանձածկ կախիկը։

Ուսկը և խեցե իրերը հիմնականում իլիկի գլուխներ են, մարմանդներ, մատանիներ, բաժանարարներ և կախիկներ։ Աշքի է ընկնում նո.3 դամբարանից գոնված ծիսանծի փոկերի ամրացման համար օգտագործված հարմարանքը, որ պատրաստվել է կատվազիների ընտանիքին պատկանող կոշշոր գիշատչի սեռական օրգանից։

Ամենամեծաթիվ խումբը կազմում են ազաթից, սարդիոնից, հասպիսից, վանակատից, ապակուց, կավի շաղամից պատրաստված ամենատարբեր գույների, ձևի ու մեծության ուլունքները և բաժանարարները։

Հատկապես աշքի է ընկնում նո.11 դամբարանը, իր կրկնակի թաղումով։ Ըստ որում երկրորդ թաղումը պարունակում էր ուշ ուրարտական - վաղ հայկական ժամանակաշրջանին վերաբերող խիստ ուշագրավ նյութ։ Այդ թվում կարմիր փայլեցրած և սև բրեղաններ, ելուստավոր կանթերով կարմիր փայլեցրած զավաթ, մրազամաններ, հալոցիկ, խոհանոցային թաղարներ, իլիկի գլուխներ, երկաթե դաշույն և եռաթե նետասլաք, բրոնզե ոլորուն վզնոց, օճազլուն պապանչան, մատանիներ, զամեր և այլն։ Արժեքավոր գաածոն՝ զրահաշապկի մաս հանդիսացող, բրոնզե թիթեղից պատրաստված լանջապանակն է, որ առաջին անգամ է հանդիպում Սովետական Հայաստանի տարածքում /նման ուրարտական լանջապանակներ հայտնի են Արևմտյան Հայաստանի տարածքից/։ Սարուխանի նո.11 դամբարանի երկրորդ թաղումը թվագրվում է մ.թ.ա.7-6 դար երով։

Այսպիսով հնագիտական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սարուխանի հազարածուն իր գուգահեռներն ունի Հայաստանի մ.թ.ա.2-րդ հազ. վերջի և մ.թ.ա.1-ին հազ. սկզբի հուշարձաններում և թվազրում է մ.թ.ա. 11-6 դդ.:

Ն.Գ.ՆԵԳԻԲԱՐՅԱՆ  
/Հրեթունի թանգարան/

ՍԱՍՈՒԽԱՆԻ ՎԱՂ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԻ ԴԱՄՐԱՐԱՍԽՐԻ

1984թ. ՊԵՂՈԽՄՆԵՐԸ

Հայկական ՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Երևանի հիմնադրման պատմության „Երեքունի” թանգարանի համատեղ արշավախումբը 1984թ. պեղումներ կատարեց ՀՍՍՀ Աշտարակի շրջանի Սասունիկ գյուղի հյուսիսային ծայրամասի՝ շրջկենտրոնից դեպի Սասունիկ տանող ծանապար հի աջ ու ձախ կողմերին տարածված դամբարանադաշտում:

Պեղվեցին միջին և ուշ բրոնզի ինչպես նաև վաղ երկաթի դարին վերաբերող, խոշոր գետաքարերից շարված կրոմլեխներով, ուղղանկյուն և քառակուսի հատկագիծ ունեցող 102 սալարկային դամբարաններ, որ կառուցված էին առանց որոշակի կողմնորոշման, որոնցից 7-ը դատարկ էին, իսկ 21-ը վերաբերում էին վաղ երկաթի դարին:

Դամբարանները ունեին 0,9-2,0 մ լայնք, 1,2-7,5 մ երկարություն և 1,0-2 մ խորություն։ Դրանցից մի քանիսը պարունակում էին կողքի պառկած կամ նստած մեկական կմախք, իսկ մյուսներում ընդհանրապես կմախքի մնացորդներ չհայտնաբերվեցին։ Այս խմբի դամբարանների հնագիտական նյութը կազմված է նեցեղենից, բրոնզե և երկաթե գործիքներից, զենքերից ու զարդերից և տարածեսակ ուլունքներից։

Սասունիկի դամբարանադաշտի վաղ երկաթի դարի նեցեղենը կազմում են սև փայլեցրած, գորշ և աղյուսագույն, ուռուցիկ կամ գնդած իրանով, նեղ վգով, դեպի դուրս ծալվող շուրբերով անկանթ, միականթ և երկանթ սափորները, մեծ ու փոքր թաղարները, տանձած իրանով անոթները, հարթ ու գոգակոր իրանով կճումները, ծորակավոր, թեյնիկը, տարբեր տիպի և մեծության քրեանները, միականթ զավաթները և փարշերը, որոնք զարդարված են ակոսավոր կամ վերադիր հորիզոնական, ուղղանայաց և թեք գծերով, ալիքավոր, հատիկաշար և եղունգազարդ գոտիներով, փայլեցման եղանակով արված ցանցանադշերով, խորադիր նախշազարդ եռանկյունիներով, քայլող դրոշմիջով դաշված զիգզագածն պատկերներով և այլն։

Մետաղյա իրերը ներկայացված են սկզբան տիպի քրոնգե և երկաթե դաշտույններով և դանակներով, երկաթե մանգաղով, երկանկ պոչուկավոր նետալաքով, եռածայր, հարթ և ցանցկեն թոշնամն կախիկներով, շքասեղով և մելի պարանշանով։ Համապատ ուշաբնակ են նո.19 և նո.60 դամբարաններից հայտնաբերված երկարավուն և երկունիկ ոսկե ուլունքահատիկները։

Սասունիկի դամբարանաղաշտում քիչ են բաժանարարները և ուլունքները։ Նրանք հանդիպում են նո.նո.19, 17, 60, 61, 63 և 95 դամբարաններում, ունեն կլոր, տափակ երկարավուն, երկունիկ, գոգավոր ֆե և պատրաստված են ազաթից, սարդիկոնից, կավե շաղախից՝ զարդարված դաշազարդ նախշով և այլն։

Սասունիկի դամբարանաղաշտի վաղ երկաթի համալիրների համարական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն իր բազմաթիվ գուրզանեռներն ունի հայատանի և Անդրկովկասի /Օշական, Շամիրամ, Վերին Նավեր, Մեծամոր, Արդիկ, Լմաշեն, Թաքիա, Ղարաբաղ, Մցիեա, Կախեթիա, Մինաքեշառուր, Թալիշ/ հուշարձաններում և թվազրկում է մ.թ.ա.

11-9 դարերով։

Ա.Ա. ԵՍԱՅԱՆ, Լ.Ն. ԲԻՍԿՈՎ, Ա.Գ. ԿԱՆԵՑՅԱՆ

#### ՕՏԱԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Օշականի համարական արշավախումբը 1984թ. շարունակել է ՀԱՍՀ Աշտարակի շրջանի Օշական գյուղի կենարունում շարժացող Դիդիկոնդ բլրի արևելյան լանջում գտնվող ուրարտական պալատական համալիրների պեղումները։

Պեղումները կատարվել են երկու հատվածներում՝ երկրորդ համալիրի հարավ-արևմտյան մասում, ինչպես նաև սկսվել են առաջին և երկրորդ համալիրներից դեպի արևելք 250 մ հեռավորության վրա գտնվող երրորդ համալիրի պեղումները։

Երկրորդ համալիրի առածքում պեղումները անցկացվեցին նո.16, 28 և 39 կացարանների միջև ընկած անկյունային հատվածում։ Այստեղ բացվեց լանջում 0,8 - 1,2 մ խորությամբ կտրված մի հարթակ՝ շուրջ 250 մ<sup>2</sup> առածքությամբ, որի վրա շինությունների հետքեր չեն նկարվում։ Բանի որ այս հարթակը առաջարկված է երկրորդ համալիրի ծայրի հարավ-արևմտյան հատվածի շինությունների միջև, կարելի է ենթադրել, որ այն հարթեցվել է նոր շինություններ կառուցելու նպատակով։

Այս հարթակի առկայությունը, ինչպես նաև երկրորդ համալիրի համեմատաբար ուշ գոյությունը վկայում է, որ այս համալիրների գոյության բոլոր ժամանակաշրջաններում նրանք՝ պարբերաբար վերանորոգվել և լրացվել են նոր շինություններով, մի հանգամանք, որը նկատվում էր նաև Կարմիր շլուրի պեղումների ընթացքում:

Պեղումների ընթացքում այստեղ հայտնաբերվել են ուրարտական և վաղ հայկական տարեր կավանոթների ավելի քան երկու հազար քեկոր և որոշ քանակությամբ քարե և ոսկորե գործիքներ, որը վկայում է այն մասին, որ այս հարթակը ինչ-ինչ պատմաններով չի կառուցվել և օգտագործվել է իբրև տնտեսական բակ:

Նրբորդ համալիրի պեղումների ընթացքում բացվեցին երկու ընդարձակ կացարաններ՝  $165 \text{ m}^2$  ընդհանուր տարածությամբ: Նրանց պատերը շարված էին կոպիտ տաշված խոշոր տուֆի քարերով, իսկ հատակները ծածկված էին նույն մշակված խոշոր սալերով:

95 քառ. մետր տարածությամբ տոաշին կացարանը ունի ուղղանկյուն ձև և ուղղված է դեպի արևելքից արևմուտք: Նրա մուտքը տեղադրված է արևմտյան պատի հարավային մասում և օժանակած է եռաստիճան սանդուխքով: Մուտքի արտաքին կողմից, աստիճանների դիմաց, բացվեց մի փոքրիկ հարթակ՝  $1,36 \times 1,02 \text{ m}$  մակերեսով: Այս հարթակի վրա, մուտքի արտաքին երկու կողմերի մոտ հնում կանգնեցված են եղել երկու սյունաձև կուռք, որոնք գլորվել էին աստիճանների վրա:

Նրկրորդ կացարանը /75 քառ. մետր տարածությամբ/, առաջինի հետ կից է կառուցված և միացված է նրան ընդհանուր դռնով. Երկրորդ մուտքի հետքերը նկատվում են նրա արևելյան մասում: Այս կացարանի սալապատ հատակը ծածկված էր ածուխի և մոխրի հաստ շերտով, որով վկայվում է հրենի և ընկած տանիքի մասին: Ըստ երկույթին՝ հրենից հետո այլևս չի գործել, քանի որ նրա արևմտյան մասում սենյակը հատում է մի հաստ պատ, որը ուղղված է հյուսիսից հարավ:

Այս կացարանի արևելյան մասում բացվեցին չորս գլանածն վերգետնյա օջախներ, որոնց ըարձորությունը և արամագիծը հասնում էր  $45-50 \text{ սմ}-ի$ : Նրանց պատերը և հատակները համախակի օգտագործումից խիստ թրծված էին: Արևելյան երկու օջախների մոտ տեղադրված է մելական սյունաձև կուռք:

Պեղումների ընթացքում հայտնաբերվել են տեղական և ուրարտական մեծ թվով խեցեղենի քեկորներ, քարե գործիքներ և ոսկրաքանական նյութ: Պեղված համալիրները թվագրվում են մ.թ.ա. 7-5-րդ դդ.:

ԱՐԳԻՇՑԻԽԻՒԽԻԼԻ 1983 թ. ՊԵՂՈԽՄՆԵՐԸ

Արշավախումբը ավարտեց արևմայան միջնաքերդի նո.1 բակի մաքըր-ման աշխատանքները։ Պեղումների միջոցով պարզվեց, որ միջնաքերդի այլ հատվածների նման մշակութային շերտը նո.1 բակի առաջնորդ և ուներ 1,5-1,8 մետր թանձրություն։ Հութարձանի շերտագրական սանդղակի ստորին մշակութային հորիզոնը բաղկացած է վանի թագավորության ժամանակաշրջանի շինարարական երկու շերտից /0-1 մ հաստություն/, իսկ վերինը զարգացած միջնադարյան ընակավայրի կացարանների տնտեսական շինությունների և կենցաղային հորերի փլատակների մասցորդներից /1-1,8 մ հաստություն/։ Կենտրոնական բակի միջնավայրում ուրաքանչափ վաղ շերտը դրսերվում է Արգիշտի 1-ինի կառուցած „ավագ” դարպանով, բակի արևելյան կողմում գտնվող պալատական շենքով, յունիսային և հարավային կողմերում առկա մեծածավալ պահանակներով ու մանր գույնզգույն գետացարերով երեսապատկան, շուրջ 750 մ<sup>2</sup> մակերես ունեցող հրապարակով։

Նույն հատվածի երկրորդ շինարարական շերտը դրսերվում է պալատական շենքին, յունիսային և հարավային ամբարներին կցված մոտակորպես համահավասար չափեր ունեցող սենյակներով, որոնց մուտքերը բացվում են բակի վրա։

Բակի տարածքում հայտնաբերված ուրաքանչափ ժամանակաշրջանի հնագիտական նյութերը սուրբ են և խիստ բեկորային։

Բակի վերին շինարարական շերտը պատկանում է զարգացած միջնադարին /հորեր, թոնիրներ, պատերի հետքերով/։

Ուշադրության արժանի է քառանկյունի, քարաշեն սատերով միջնադարյան նո.7 հորը։ Նրա պատի վերին շարքի քարերից մեկը իր վրա կրում էր Արգիշտի 1-ին թագավորի սեպագիր արծանագրությունը, որի նշանակությունը Արգիշտիխինիլիի տնտեսական պատմության համար շատ մեծ է։

Արծանագրության բովանդակությունը հետևյալն է. ,՝Արգիշտին Մենուայի որդին այս շաեմարանը կառուցեց ,՝աշխատսե՛՝ տան տակ, 10100 քառի այստեղ /կտեղավորվի՛՛։

Ա.Ա.ՆՄԱՅԱՆ, Լ.Ն.ՔԻՍԳՈՎ,  
Ա.Գ.ՎԱՆԵՑՅԱՆ, Ս.Գ.ՀՄԱՅԱԿՅԱՆ

ՆՈՐՄԱԿԱՆ ՌԱԴԱՐԱՐԱՆ ԴՐԵՎԱՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱՆՀԱՊԻՇՈՒԹՅԱՆ և ազգագրության ինստիտուտի արշավախումը՝  
ըստ 1984թ. գարնանը պեղեց, Ավտոագրեգատ գործարանի բակում գառանա-  
կանորեն բացված ուրարտական մի դամբարան, որը գտնվում է ժամանակա-  
կից մակերեսից 1,2 մ խորության վրա, իսկ նրա հյուսիսային պատը  
ընկած է գործարանի արտադրամասերից մեկի հիմքի տակ:

Դամբարանային այս կառուցքը, որ կազմված է երկու խօսքից, ուղ-  
ղանկյուն է, ունի  $2 \cdot 3,5$  մ ներքին չափսեր և ուղղված է հյուսիսից  
հարավի: Նշաներսի պատերը ունեն չոր շարվածք՝ ողորկ տաշված տուֆե  
խոշոր քարերից: Առաջին խուցը, որի քարձրությունը 2,15 մ է, ունի  
չորս որմանաբոր 2՝ երեքը արևմտյան, մեկը՝ հարավային պատում, որոնք  
ունեն  $0,5 \cdot 0,5 \cdot 0,5$  մ միկրոլույն չափսերը: Դռան մուտքը /1,29 ·  
1,04 մ բացվածքով/ տեղադրված է հյուսիսային պատում, ծածկված է  
մեկ տուֆե սալով: Հատակը ծածկված է հարթ տուֆե սալիկներով, իսկ  
հարթ ծածկը կազմված է հինգ խոշոր լայնակի տեղադրված տուֆե հեծան-  
ներով, որոնց թուշը կարմեցնում է երկրորդ խուցի կրայով երկայնա-  
կի գցված վեցերորդ հեծանը:

Նրկրորդ խուցը 2,07 · 1,1 մ չափսերով և 1,4 մ քարձրությամբ  
կառուցքած խոշոր խորշի մեռվ և քածանված է առաջինից ոչ քարձր  
/0,5 մ/ պատով, իսկ նրա հատակը կազմված է այդ պատի լայնության  
մակերեսով և հողի ու խճի լցվածքով:

Առաջին խուցի երեք խորշերում /բացի հարավայինից/ տեղադրված  
եր մեկական կավե ամյունասափոր, լցված մարդկային կմանքի առանձին  
տարրերի մնացորդներով/ խոռնված կենդանիների և թոշունների մանր  
ոսկորների հետ: Նման ամյունասափորներ, ծիթամրագ, զնակ և մեկ խո-  
շոր թեյնիկածն անոթ, որի ծորակը ուներ առյուծի գլխի տեսք, տեղա-  
դրված էին առաջին խցի հյուսիս-արևելյան անկյունում: Նրկու խօսք-  
ըսկամանող միջնապատի վրա տեղադրված էին ցուլերի երեք գլուխնե-  
րով զարդարված մեկ խոշոր անոթ և մեկ քրեղան:

Առաջին խցի հատակի տակ, պատերին կից հայտնաբերվեց թաքատոց,  
որտեղ պահված էին բրոնզե կապարմի բեկորներ, օճագլուխ ապարանչան-  
ներ, ջարդված բրոնզե թաս, ազաթե ուլունքներ, կիսալուսնի և գրի-  
ֆոնի պատկերով զիշերից պատրաստված զանգակածն կնիք:

Նրկրորդ խցի հատակի տակ բացվեց երկրորդ թաքատոցը: Այստեղ

Հայտնաբերվեցին երկու լայն քրոնզե գոտիների մասեր, որոնք զարդարված էին որսի տեսարաններով, մարտակառքներով, հեծյալներով, նետաձիգներով, առյուծներով, պղիծոններով, շղունների և ցուլների պատկերներով։ Միաժամանակ գտնվեցին երկաթի ժիասանծի մասեր, քրոնզե մարմանդներ, օճագլուխ ապահանջաններ, մեծ և փոքր զամեր։ Գտնվեցին նաև երկու խոշոր երկաթե թրերե բեկորներ, որոնց ընակները զարդարված են քրոնզի պարույրներով, տերևածե երեք դաշտույններ, որոնց երկար լեզվակների վրա պահանջել են զամերի հետքեր, ինչպես նաև քրոնզե սափորների և կաթսանների բազմաթիվ բեկորներ։

Դամբարանային այս եզակի կառույցի պեղումները, որը իր ժեռվ մոտենում ը Ալթին-Թեփեի կոլումբարիին, զգալի կերպով հարստացնում է մեր գիտելիքները ուրարտական մարտարապետության, նրա ինժեներական մաքի և նյութական ու հոգեկոր մշակույթի մասին։

#### Ս. 4. ՀՄԱՅՆԱՑԱՆԱԿԱՆ ԹԱՐԱԾՈՒՅՈՒՆ

##### ԹԱՐԱԾՈՒՅՈՒՆ ՈՒՐԱՐՏՈՒՅՈՒՆ

Ուրարտում հայտնի էր թաղման երեք հիմնական տիպի ծես. ա/ դիաթաղում, բ/դիակիզում, գ/դիամաննատում։

Դիաթաղման ծեսն հայտնի է ութ տարբերակներով։

1. Թաղում ծեռակերտ անձավներում. դիակը երքեմն դրված է լինում փայտե, քարե դագաղի մեջ /կան, Սարուիան, Բոստանկայա /~/, Կայալի դերե /~/, Լիթ, Սազգերը, Հրազդանի կիրմ /~/, Արգիշտիխինիլի /~/, Դեղելի, Արծկե։
2. Մի կամ մի քանի քածանմունքներից կազմված դամբարաններում՝ փորված գետնի մեջ և կառուցված քարից, դրոմոսով. դիակը դրվել է քարե կամ փայտե դագաղում ճմին /Ալթին-Թեփե/։
3. Սալարկդում՝ կառուցված ժայռի մեղքվածքի մեջ /իգդիր/։
4. Սալարկդային դամբարանում /Մեծամոր, Հակկո, Օշական/։
5. Մեծ, քարարկդային դամբարանիցում /Կարմաղը յուր, Օշական/։
6. Քարարկդ հիշեցնող դամբարանիցում, կառուցված սակայն չթրծված աղյուսներից /Արգիշտիխինիլի/։
7. Հիմնանողային թաղում /Լիթ/։
8. Կարսասային թաղում /Արգիշտիխինիլի/։
- Դիակիզման ծեսն հայտնի է հինգ տարբերակներով։
9. Ամյունաստփորը թաղված է ժայռի մեղքվածքում /իգդիր/։
10. Ամյունաստփորը թաղված է հողի մեջ /նոր-Արեշ, Արգիշտիխինիլի/։

11. Ամյունասափորը դրված է դրումոս ունեցող՝ մեկ կամ մի քանի քանի մունքուներից կազմված դամբանախցում /Ժմին/Ալթին-թեփե/, Նրեւն, Լիմ, Արծկե, Դեղելի/:
12. Ամյունասափորը դրված է ճեռակերտ անձավում /Արծկե, Ալիշար/:
13. Ամյունասափորը թաղված է սալարկղային դամբարանում /Լիմ/:  
իսկ դիմասանատման ծեսն հայտնի է չորս տարբերակներով:
14. Ամյունասափորը դրված է քարե դագաղի մեջ:
15. Ամյունասափորը դրված է սալարկղային դամբարանում:
16. Ամյունասափորը դրված է դամբանախցի պահ խորշի մեջ /Նրեւն/:
17. Ամյունասափորը թաղված է գետնում /Արգիշտիխինիլի/:
- Այս ժամանակաշրջանում բիայնացիներին ընորոշ էր թերևս թաղման 1 և 2 ճները, իսկ հայերին՝ դիակիզման ծեսը: Դիակիզմամբ թաղումներ հայտնի են Արարատյան հաշտում, Վանա լմի հյուսիսային ափերին, Բարձր Հայքում: Այս վայրերում հայտնու ընակչություն է վկայված՝ սկսած մ.թ.ա. 8-7-րդ դարի առաջին կեսից: Դիակիզմամբ կատարվող թաղումներն ընորոշ էին արևելյան մուշքերի համար /կրողներն են համարվում հայոց լեզվի/: Այս առումով ուշազրակ է շ որ մինչև մ.թ.ա. 1000թ. Կարքեմիշում ընդունված է եղել թաղման հետևյալ ծեսը: Իննույթյալին կծկված դիրքով տեղափորել են ամյունասափորում և թաղել կացարանի հատակի տակ: Կարքեմիշը արևելյան մուշքերի կողմից գրավվելուց հետո, սակայն ծեսը փոխվում է՝ տարածում է ստանում դիակիզմը:

Կերը թվարկված հուշարձանների շարքում հայտնի են ղեպքեր, երբ նույն դամբարանում հանգույցալները թաղված են տարբեր ծեսերով: Դեղելիի, Արծկեի, Ժմինի որոշ դամբարաններում բացվել են թաղումներ, կատարված դիակիզման և դիակիզման, իսկ Նրեւնի դամբարանում՝ դիակիզման ու դիմասանատման ծեսերով: Սրանք թերևս այլացեղ մարդկանց ընտանեկան դամբարաններ են, որտեղ ամուսիններից յուրաքանչյուրը թաղվել է իր ցեղի սովորությամբ: Նման մի երևույթ մատնաշել է ղեռնս Կուֆտինը՝ հեգիրի դամբարանադաշտի նկարագրության ժամանակի:

#### Գ.Ա.ՏԻՐԱՑՑԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1983-1984թթ. աշխատանքները շարունակվել են Միջնաբերդում և քաղաքի արևմտյան ծայրամասում գտնվող հելլենիստական դարաշրջանի

Նգարակում:

Միջնաբերդում շարունակվել է ուղարտական այդպիս կոչված մերձ-  
ամարային համալիրի ուսումնաշիրությունը: Այսաեղ բացվել են մի  
շաք սենյակներ, որոնք ընդարձակում են մեր պատկերացումները համա-  
լիրի մարտարապետական և հառակազմական առանձնահատկությունների մա-  
սին: Համալիրը ընդարձակվել է դեպի հյուսիսդարևմուտք և հարավի: Հա-  
մալիրի հարավային մասում /սենյակ 15/ երևում են բւրի լանջի դարա-  
վանդման ենթարկելու փորձեր, բացահայտված է լանջն ի վայր իշխող պա-  
տերի, ինչպես նաև հատակի աստիճանաձև ընույթը: Արևմտյան կողմում  
պեղվեցին համալիրի միջանցքից սկիզբ առնող սենյակների մի շարքին երկու սենյակ /նո.16 և 17/: Նո.16 սենյակը աշբի է ընկնում իր խո-  
րությամբ, պատերի բարձրությունը պահպանվել է մինչև 3,50 մ/ և  
դռան բացվածքով, որի մեջ լավ երևում են վերևից փլկած աղյուսի  
շարքերը: Հյուսիսում ավարտվել են արևելքից արևմուտք ծգվող չորս  
սենյակներից կազմված շարքի պեղումները, /նո.43 սենյակ/, ինչպես  
նաև հյուսիսից այդ շարքին նարող երկու հարևան սենյակները /նո.14,  
18/, որոնք հաղորդակցվում են ներ դոներով:

Ուրարտական սենյակների վերևի շերտերում պահպանվել են պատերի  
ջարե հիմքեր, հատակի հնաքեր, ինչպես նաև տնտեսական բազմաթիվ հո-  
րեր, որոնք մեծ վնաս են հասցեր հուշարձանի կավե մարտարապետու-  
թյունը:

Ուրարտական ժամանակաշրջանի հնագիտական նյութերը ներկայաց-  
ված մետաղ առարկաներով, խեցեղենով՝ հասարակ և բարձրորակ կարմիր  
փայլեցրած նմուշներով, ուշադրության արժանի են կավանոթի քեկոր-  
ները ամենայն հավանականությամբ կավանոթի տարողությունը նշող սե-  
պագերով:

Անտիկ դարաշրջանին են վերաբերում խեցեղենի բազմաթիվ օրինակ-  
ները, ջարե անոթների քեկորներ և այլն: Միջնադարյան նյութը գտնվել  
է գլխավորապես տնտեսական հորերում և կազմված է խեցեղեն և մետաղ-  
յա առարկաներից, որոնք առնչվում են Արմավիրի բւրի կրա առաջացած  
միջնադարյան ընակավայրի հետ:

Հելլենիստական պարակում /պեղող հ.Կարապետյան/ պեղումները  
շարունակվել են հյուսիսային ուղղությամբ Հ.թ.ա.3-1-ին դարերին  
ընորոշ խեցեղենից ու ջարեց պատրաստված իրերից բացի, այսաեղ գըտ-  
նըվել է ուշ հելլենիստական ժամանակաշրջանի մետաղյա անոթի ըրունա-  
կանի, մորուցավոր աղամարդու քանդակով, որն իր լիակատար զուգահեռն

Դւնի մ.թ.ա.1-ին դարով թվագրվող Սիսիանի քարակերտ դամբարանում գտնված մետաղե նյութերի թվում:

#### Ժ.Դ.ԱՎԱՏՐԹԱՆ

#### ԱՐՏԱԶԱՑԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1983-1984թթ. Արտաշատի հնագիտական արշավախումբը շարունակեց պեղումները 8-րդ բլրի հյուսիս-արևելյան հառվածում՝ ըլքի պայտածն պատի մոտ, 5-րդ բլրի վրա, արևմտյան դամբարանաղաշտում, Խոր-Վիրապի մասպարհի եզրին՝ գերեզմանոցի հյուսիս-արևելյան հառվածում և 1-2րդ բլուրները միացնող պարանոցի հառվածում:

8-րդ բլրի վրա աշխատանքները կենտրոնացվեցին 2-րդ շինարարական շրջանին վերաբերող ընակելի համալիրում, որի վեց սենյակը բացվել էր 1982 թվ.: Որոշվեցին համալիրի արևելյան և արևմտյան սահմանները: Բացված սենյակները չափերով մեծ չեն: Ամենուրեք նկատելի են ուժեղ հզեհնի հետքեր, վառված գերանների ու տախտակների մասցորդներով: Համալիրի հարավ-արևելյան սենյակները մաքրելիս, արևելյան պատին կից բացվեց ուղղանկյուն մի կրակարան, որի հառված շարված էր թրծած քառակուսի աղյուսներով, իսկ եզրերը կիսած սոլեններով և հում աղյուսներով։ Կրակարանին կից, հարավային կողմում գտնվեց անտիկ շըրջանի թոնիր։ Ամենայն հավանականությամբ թոնիրն ու կրակարանը կապված են միմյանց հետ և դառելով նյութերից, կենցղային նշանակություն ունեն: Համալիրի հատակի տակ՝ 15-30 սմ խորության վրա պահպանվել է 1-ին շինարարական շրջանին վերաբերող հատակը, որի վրայի մոխրաշերար պարունակում էր մեծ քանակությամբ մանր ու մեծ եղջերավոր անսունների ոսկորներ:

Հայտնաբերված հնագիտական նյութերը պահեստային մեծ սենյակի նման առատ չէին, բայց մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Կղմինդրների մասցորդները, կրաշաղախն քիվերը, կանաչ ու դեղին որմնանկարների բեկորները խոսում են համալիրի ներքին հարդարանքի ու ծածկի ինչպիսին լինելու մասին:

Արդեն սովորական են դարձել մ.թ.առաջին դարի խեցեինի հետ գունազարդ խեցեղենի երևան զալը, որը վերջինիս արագորության ու գոյատևման հարցը մշագրանչ նարակորություն է տալիս: Ուշագրավ են հեծյալի և „իշխանի” կավե արձանիկները, տեղական օնիցից պատրաստված ալաբասարդեմ անոթը, արևմտյան Փոքր Ասիայից ներմուծված օծանելիքի տանձածն սրվակները, սամշիտից պատրաստված տուփի մասերը,

բրոնզե արկդիկը, կահույքի բրոնզե մեավոր մասերը, շիկուրը, բրոնզե հայելիները, կանաչպուն ջարից խալիկյան կնիքը և այլն:

Ժանապարհի եզրին կատարվող պեղումները ցույց տվեցին, որ այս-  
տեղ ցածր թմբերի վրա տեղավորված է եղել քաղաքի բնակելի թաղամասե-  
րից մեկը: Այստեղ պահպանված շերտերը վերաբերում են առաջին շինարա-  
ռական շրջաններին: Որմնասյան մաս կազմող քարերով, որոնք երկրորդ  
անգամ են օգտագործվել, կառուցված լայն պատերով մեծ համալիրը, հա-  
կանաբար վերաբերում է քաղաքի կառուցապատման վաղ ժամանակները: Այս-  
տեղ հայտնաբերվել է հարուստ գունազարդ խեցեղեն հետաքրքիր զարդերով:  
Հատկապես ուշագրավ են փորագիր համակենտրոն շրջաններով և գունազարդ  
տափաշերը:

5-րդ բլրի վրա պեղումներ կատարվեցին նախորդ տարիներին բացված  
համալիրներից արևմուտք և հարավ-արևելք գտնվող տեղամասում՝ 100 քմ  
մակերեսով: Բացված սենյակները վերաբերում են մ.թ. 1-2-րդ դարերին:  
Այդ շրջանի նյութերը սակայն խիստ աղքատիկ են: Ուշագրավ են ներ-  
մուծված թասերի, կարմիր լաքով սկուտեղի, ջնարակած խեցեղենի քե-  
կորները: Այդ շերտի հատակի տակ գտնվեցին նաև գունազարդ խեցեղենի  
հետաքրքիր նմուշներ, նշանաբան զարդերով փիլալաներ և այլն:

Արևմտյան համբարանադաշտում ջրանցք անցկացնելու ժամանակ ավեր-  
վել էին կարասային թաղումներ: Արշավանմբին հաջողվեց պեղել դրան-  
ցից չորսը: Դրանց մանկական թաղումներ են, կատարված երկանթանի  
հիանալի կարասներում:

1-2 բլուրների պարանոցի հատվածում մշագրավեցին դեպի 2-րդ բլ-  
ւուրը տանող պարսպի ուղղությունը, ներսից նրան հարող շինություն-  
ները, մուտքերի տեղադրությունը, կրկնակի պարիսպների հարաբերու-  
թյունը և այլն: Պարզվեց, որ տեղանքը հիանալի հորեն օգտագործելու  
շնորհիվ ստեղծվել է պաշտպանական կուռ համակարգ: Դա նշանակում է  
կառուցող մարտարապետը լավատեղյակ է եղել ժամանակի պաշտպանական  
շինություններին և ռազմական արվեստին:

Պարսպին կից շինություններում հայտնաբերվեցին մ.թ.ա. 2-1-ին  
դարերի բազմազան և հարուստ խեցեղեն մնացորդներ, որոնց մեջ կան հե-  
տաքրքիր նոր մեեր: Ուշագրավ են ներմուծված խեցեղենի նմուշները,  
լեռնային բյուրեղից պատրաստված գավաթի քեկորը, ծածկի սոլեններն  
ու կալիպտերները:

Հայտնաբերված նյութերը միանզամ ևս վկայում են Արտաշատի առև-  
տորական, արհետավորական և մշակութային խոշոր կենտրոն լինելու  
մասին:

## ՄՐՏՎԱԾԻ ԺԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՖԱՍԱԼԻԽՄՆԵՐԻ

ՃԱՐՎԱԾԲԽՄՆԻ ՈՐՈՇ ԾԻՊՐԻ ՄԱՍԻՆ

Հուշարձաների պեղումների ընթացքում բացված շինարարական մնացորդների թվազրելու, տեղական առանձնահատկությունները և արտաքին ազդեցությունները բացահայտելու համար կարևոր նշանակություն ունեն պատերի շարվածքների դասակարգումը և նրանց նկարագրությունների համեմատումը։ Առաջին հերթին դա վերաբերում է ընակելի տների պատերի շարվածքներին, որոնք առավել դժվար են ենթարկվում նկարագրման։ Առ այսօր, շարվածքները դասակարգելիս, հետազոտողները մի դեպքում ելնում են պատերի կոնսարուկտիվ առանձնահատկություններից, մյուս դեպքում՝ օգտագործվող քարերի մեջ կամ պատի նակատի գծագրություն, որը հարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել շարվածքի մասին։ Այդ պատճուռը շարվածքը նկարագրելիս անհրաժեշտ է նշել նրա կոնսարուկտիվ սիստեմը, տալով նակատային մասի նըկարագիրը /կանոնավոր, անկանոն, շարքային, պոլիգոնալ/, ուղղահայաց լայնական հատման նկարագիրը /միշաբրտ, երկշերտ, եռաշերտ/, ցույց տալ առանձին քարերի միմյանց կապակցման ընույթը շարվածքներում, նշել քարերի միջին չափերը, մեջ, նյութը և պատի հասարակությունը։

Արտաշատի շինությունների պատերի շարվածքների զարգացումը ուսումնասիրելու համար առավել նպատակահարմար է 8-րդ եւթի հարավային տեղամասը, որը զանվում է համեմատաբար հարթ տեղանքի վրա, իսկ մըշակութային շերտի խորությունը որոշ տեղերում հասնում է մինչև 3-3,5 մետրի։ Այստեղ պահպան։ Են բոլոր չորս հիմնական շինարարական շրջանների պատերի մնացործները /2-րդ դ. մ.թ.ա. - 4-րդ դ. մ.թ./։

Զնայած նրան, որ գոյություն ունի որոշակի ընդհանուր շինարարական եղանակ, որը արտահայտվում է քարե հիմքի վրա հում աղյուսե պատերի օգտագործմամբ, պարզ նկատվում են վերը նշված չորս շրջանների պատերի կառուցման շինարարական տեխնիկայի առանձնահատկությունները։

Ինչպես հայտնի է Արտաշատը կառուցված է միասնական հատակագծով, որտեղ օգտագործված են ժամանակի նորագույն քաղաքաշինական և ամրաշինական նվազումները։ Առաջին շինարարական շրջանին /180-170թթ. մ.թ. ա. - 59թ. մ.թ./ վերաբերելով պատի շարվածքները աշքի են ընկնում քարերի լավ մշակմամբ, հիմքի տակ ընկնող բնական ժայռերի խնամքով օգտագործմամբ, աղյուսների ստանդարտ չափերով։

Նրկրորդ շինարարական շրջանի /60-160 թթ. մ.թ./ շարվածքները գտնվում են նախորդ շրջանի շինությունների հարթեցված փլվածքների վրա: Դա հիմնականում միաշարք, եռաշերտ, երկմակառ, կոպիտ մշակված քարերից շարվածքներ են:

Նրբորդ շինարարական շրջանի շարվածքները վկայում են վաղ շըր-ջանի պատերի և շինությունների շատ վերականգնության մասին: Պատերի մեջ հանդիպում են նաև նարարապետական դետալներ երկրորդ օգտագործմամբ:

Վերջին, չորրորդ շինարարական շրջանի /390-360 թթ. մ.թ./ պատերը ցածր որակի, պարզունակ շարվածքներ են, որոնք վկայում են այդ շրջանի շինարարական ավանդույթների անկման մասին: Ինչպես հայտնի է, այդ ժամանակ /332-388 թթ./ Խոսրով Կոստակ թագավորը արքունիքը արդեն տեղափոխել էր Դպին:

#### Ի.Ա. ԿԱՐՄԱՆՏԵՍՅԱՆ

#### ԿԱՐԺԱՎՐՑՈՒԹԻ ՊԵՂՈԽՄՆԵՐԸ

Բնակավայրի հարավ-արևելյան անկյան պեղումները ավարտելու նը-պատակով, 1983-1984 թվականներին աշխատանքները կենտրոնացվեցին նո. 6, 7, 9 և 10 շինությունների առջև սփոված տարածքում: Վեց քառակու-սինների միջոցով պեղվեց 320 քառ. մետր տարածություն, մաքրվեցին նո.9 և 10 սենյակների համար ընդհանուրը /երկ. 15,5 մ/ և նո.6 և 7 սենյակների հարավային պատերի արտաքին երեսները, ճյուսիսից հարավ ճպկող առաջին, երկայնական պատի հարավ-արևելյան անկյունը: Այս պա-տի հիմքերից ցած հայտնաբերվեցին նրան ուղղահայաց մի շարվածք /երկ. 5,0 մ, պահպանված քարձորությունը՝ 0,35 մ/ և նրա հարևանությամբ մշակութային շերտ: Այս շերտը, որը հայտնաբերվում էր մոխրի ու ած-խի ուղեկցությամբ, հետազայում ծածկվել, տոփանվել և վեր էր ածվել մեծ քակի, քանի որ վերին շերտերում շինարարական հետքեր չկան:

Նոր քառակուսիններ դրվեցին ճյուսիս-հարավ ճպկող երկրորդ պա-տից ներս և սկսվեց բնակավայրի երկրորդ բնակելի հատվածի սիստեմա-տիկ պեղումները: Ուրվագծվեցին երեք շինություն: Դրանցից երկուսը /նո.12 և 13/ սենյակներ են, քանի որ դրանց հարավ-արևելյան ան-կյուններում բացվեցին, բնակավայրին ընորոշ, ուղղանկյուն շարված օջախներ /0,45 մ. 0,65մ/ մոխրի, ածխի, կիսաայրված փայտի և կոտրված անոթների մնացորդներով:

Այս սենյակների միջև բացվեց 2,5 մ լայնություն ունեցող մի միջանցք, որը արևելյան կողմից միացավ, վերը ըննարկված տարածք - բակի հետ: Միջանցքի միջնչեւ 1 մ պահպանված, հասանեղույս պահեք շարված են խոշոր թարերով, երկար տեխնիկայով, հատակը պատճեն է մեծ սալերով: Միջանցքի դիրքի և կառուցվածքի առանձնահակուէթյուններից ելնելով, ենթադրում ենք, որ բացվել է բնակավայր տանող մուտքը, դարպասը ամրացնող ելուստներով:

Ինչպես միշտ, այս տարիներին ևս, ամենավերին շերտում, պատերին կից բացվեցին ուշ ժամանակաշրջանի թաղումներ՝ վեցը մկան և ուղղանկյուն կառուցվածք ունեցող դամբարաններում, երեքը՝ կմումներում, առանց ուղեկցող տարրկաների: Բացառություն էր կազմում միայն Նո.35 դամբարանը, որում գտնվեց մեկ երկաթե կեռ դանակի շեղը և կավե ծարմանդ՝ հանգուցյալի կրծքին: Թաղումները իջեցված են հելլենիստական մշակույթի շերտի մեջ, երբ բնակավայրը այլևս գոյություն չուներ:

Հելլենիստական մշակույթի շերտը, ի հայտ է զալիս սենյակներից և բակի պատերին կից տարածքից, 0,5 մ թանձրությամբ: Զերոց բերկած նյութը գերազանցապես բեկորներ են՝ կարմիր, բաց շագանակագույն մակերեսով, փայլեցրած թասերի, պնակների, ըմպանակների, կիսագնդած գավաթների, սափորների կարասների, կմումների բեկորներ հելլենիստական խեցեղենին ընորոշ հատկանիշներով:

Միջնէ 1983-1984թթ. պեղումները, բազմիցս նկատվել եր, որ 0,5-0,8 մ խորությունից հետ. խեցեղենի որպակը փոխվում է, արտաքինը գորշաշագանակագույն, իսկ հաղորման տարրերը ավելի գրաֆիկական են դառնում, կարմիր փայլեցրած տեսակները անհայտանում են: Սակայն վաղ ժամանակաշրջանի մաքուր շերտ չէր առանձնանում: Այս տարիներին Նո.6 և 7 սենյակների հարակային պատի հիմքերից ցած հայտնաբերված պատի, նրան կից, կաղ հայկական խեցեղենին ընորոշ տեսակների բեկորներով լի շերտի բացահայտումը, թույլ են առլիս կստանորեն խոսել բնակավայրի գոյության մասին նաև մ.թ.ա.6-4-րդ դարերում:

## ԱՆՑԻԿ ՇԻՐԱՎԱՎԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1989թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին Շիրավավանի հնագիտական ուսումնասիրությունների համար ընտրվեց երրորդ պեղավայրի՝ սյունազարդ դահլիճի տեղամասը։ Այունազարդ դահլիճը, որը բացվել էր 1977-1978թթ.; 0,5 ~ 0,7 մ խորության վրա, կազմում էր մի ընդարձակ համալիրի մասը և ուներ 150 քառ. մետր պահպանված տարածություն։ Այս տեղի բացվել էին դահլիճի երեք պատերը, սպահատակը և չորս մեծ տունածն խարիսխները։

Որոշվեց հնուացնել այս խարիսխներից երկու կենտրոնականները և բացել պատերի ու սալահատակի միջև ընկած տարածքը /130 քառ. մետր/։ Այս հատվածը խարիսխների մակարդակից ցած խորացվեց մինչև 2 մետր։ Դրա շնորհիկ ստացվեցին ընակավայրի շինարարական տեխնիկայի, շերտագըրության և ժամանակագրության վերաբերյալ շատ կարևոր տվյալներ։

Ամենափառ շինարարական շերտը, ընորոշվում է հզոր կառույցներով, որոնք օգտագործված քարերի չափերով մերժենում են ավելի վաղ ժամանակաշրջանների կիկլոպյան կառույցներին։ Բացվեցին սալարկված հասակով երկու շինության վերաբերյալ։ Այստեղ հայտնաբերված խեցեղենը, այդ թվում երկնագույն չնարակով նմուշները, թույլ են տալիս դրանք թվազնություն մ.թ.ա. 2-րդ դարից ոչ վաղ։ Պետք է նշել, որ այս ժամանակաշրջանի բոլոր կառույցները ավերվել են մեծ հրեհի հետևանքով, որը առաջացրել է հողի, մոխրի և ածխի 20-40 սմ հաստության մի շերտ։

Դրանից հետո, հավանաբար մ.թ.ա. 1-ին դարում մեղնաբերվել են նոր շինարարական աշխատանքներ։ Հայտնաբերվեցին, կրկին սալարկված, բայց ավելի պակաս հիմնավոր շինությունների մնացորդներ, կատարված այլ շինարարական տեխնիկայով։ Կավե շաղախե լիցքով երկշար պատեր։ Հայտնաբերված խեցեղենն նյութի մեջ նշանակալի է սև լաքի հետքեր կըրող գավաթի բեկորը, որը հավանաբար ունի պերպամոնյան ծագում։

Սյունազարդ դահլիճի տակ հայտնաբերված մշակութային շերտերը և շինությունները, հնարավորություն ընձեռնեցին, պեղավայրի հարավային մասում բացված, կավածեալ հատակով և տորածն խարիսխով շինությունը վերաթվագրել ավելի վաղ ժամանակով և արժանագրել սյունազարդ դահլիճի խարիսխների մի մասի երկրորդական օգտագործման փաստը մ.թ.ա. 1-ին ~ մ.թ.ա. 1-ին դարերում։ Բացի այդ ի հայտ եկավ դահլիճի հարավա-

յին պատի կառուցվածքի մի հետաքրքրից առանձնահամեկությունը։ Պարզը՝ կեց, որ դահլիճի հառակից 0,5 մ վեր պահպանված հարավային մույթերով պատը, հանդիսանում է ավելի հին կառուցյա պատի վերին մասը, որը հրդեհից հետո պահպանվել է 2 մ բարձրությամբ։ Դահլիճի կառուցողները գիտակցաբար այն ծածկել են մասամբ և վերին մասը օգտագործել են որպես նոր պատի հիմք։ Ըստ որում հարավային պատը գտնվում է խարիսխներից ոչ թե 4 մ հեռավորության վրա, ինչպես դահլիճի մյուս պատերը այլ 7,5 մ։ Այստեղ հեծանները հենվելիս են եղել ոչ թե անմիջապես հարավային պատի, այլ նրանից 3,5 մ առաջ դրված մույթերի վրա։ Այս մույթերը պատի վրա առաջացնում էին որմանախորշեր։

Անկասկած է, որ Շիրակավանի սյունազարդ դահլիճի այս, պատահական առաջացած շինարարական հնարք, հետազյում գտել է իր հաստատուն կիրառությունը, որն էլ ավելի ուշ արտացոլվել է Գառնիի և Դվինի սյունաղահիմներում։

Արշավախումբը այս տարի ևս պեղել է քարարկղային և կարասային թաղումներ։

1984թ. հետախուզական պեղումների ընթացքում, նրերույցում քացիք 10-րդ դարի միջնադարյան մի շինություն, որը 14-15-րդ դարերում ենթարկվել է վերակառուցումների։

#### Գ.Գ. ԶՈՅԱՐԹՅԱՆ

##### ՆՈՐ ՆՑՈՒԹԵՐ ԴՎԻՆԻ ՀԵԼԵՆԻՆՏԱԿԱՆ ԲԱՍԱՄՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. 1988-84թթ. ընթացքում շարունակեցին դեռևս 1982թ. բւրի գագաթի հյուսիս-արևելյան մասում հայտնաբերված հելենիստական դաշտքանի շինարարական համալիրի պեղումները։

Վերջին երկու տարիների հնագիտական ուսումնասիրության շնորհիկ ուրվագծեց որոշակի հատակագծային պատկեր հիշյալ համալիրի հյուսիս-արևելյան հատվածում։ Այստեղ հայտնաբերված բավական հզոր պատերը /լայնությունը հասնում է 1-1,15մ, բարձրությունը՝ 0,60-0,85մ/՝ շարված կավե շաղախով շաղկապված միջին շափի անտաշ գետաբարերով, կազմում են կամանավոր սենյակներ և դահլիճներ, որտեղ և երևան եկան խնամքով ծեփված երեք կավակերտ հատակներ։ Հյուսիսից՝ հարավ գգվող կենարոնական դահլիճի ստորին հատակի վրա, իրենց նախնական տեղում հայտնաբերվեցին սպիտակ ավագաբարից կերտված զույզ

առածեն լարիսթներ՝ միմյանցից 3 մ հեռակորության վրա՝ վերջիններս վերաբերում են ներկայացվող շինության կառուցման սկզբնական փուլին։ Շինությունը իր գոյության ընթացքում կրել է մի շաբաթ շինարարական փոփոխություններ, որոնք նկատվում են առընթեր մակարդակի վրա գանձող հասակների առկայության և պատերի վերանորոգումների շնորհիվ։

2. Պեղումների շնորհիվ ես մեկ անգամ քացվեցին կարեկորագույն շերտագրական հանգույցներ, քանի որ հելլենիստական շինության քարե հիմապատերը ակնհայտորեն մտնում են 4-5-րդ և 5-6-րդ դար։ Միշնադարյան կառույցների տակ, բացառապես առաջնագույն առաջնագույն երկու արքեր շինարարական և մշակութային ժամանակաշրջաններ։

3. 1,5 մ հզորությամբ հելլենիստական շերտը ներկայացված է նաև դարաշրջանին համապատական՝ համար գունազարդման բազմապիսի տարբերակներով հարուստ խցանությունը հավաքածուով /առաջարկերի, թաս-ցրեղանների, կարասների, ծրագի, խոնացային անոթների բեկորներ/ և մեաղեն առարկաներով /երկաթե կոր դանակ, տեղի ծայր, քրոնզե հայելի և այլն/։

Կիրառված շինարարական առենիկայի, մարտարապետական մանրամասների, հնագիտական նյութերի վերլուծության շնորհիվ ընձող համալիրը թվագրվում է մ.թ.ա.2-րդ - մ.թ.1-ին դարերով։

## ՀԱՅՈՑՆԹԱՎ /ԵՊՀ/

### ՏԱՄԻՐԱՄԻ ԱՆՑԻԿ ՃԱՄԱՍԱԿԱՇՐՋԱՎԻ ԲԱՄԱՎԱՋԹԻ ՊՂՂՈԽՄՆԵՐԸ

1983-84թթ. ԵՊՀ-ի հնագիտական արշավախումբը շարունակեց Շամիկամի վաղերկաթեղարյան քաղաքանեղի տարածքում գանձող անտիկ ժամանակաշրջանի ընտակավայրի պեղումները։ Այն զբաղեցնում է հրվանդանի վրա գանձող քաղաքանեղի հարավ-արևմայան մասը, 5-րդ պաշտպանական պարսպակի երկու կողմերում ընկած տարածքը /1-հա-ից պվելի/։ Բնակավայրի հարավ-արևմայան հատվածը հարթավայրի կողմից պաշտպանված է անտիկ ժամանակաշրջանում վերակառուցված պաշտպանական պարսպով։ Անտիկ ընտակավայրը պաշտպանվել է նաև հրվանդանը գոռառող երկու ծորերի եզրերին կառուցված պարիսպներով։ Վերջիններս ծառայել են նաև որպես պատեր ներսում կառուցված ընտակարանների համար։

Շամիրամի անտիկ ընտակավայրի 5-րդ գորսպից հարավ-արևելուաց ընկած հատկածը ներկայանում է մեզ երկու շինարարական նորիզոններով։ Այս մեկում վաղերկաթեղարյան ժամանակաշրջանի կտոռւյցների հետքեր նկատում են միայն հարավային և հյուսիսային /նաևդաբայ ձոր/ ձորերի եզրային մի քանի հատկածներում։ Դրանց պաշտպանական պարիսպների մասցորդներ են։ Հրվանդանի արանայաված ժայռոտ հատկածներում առկա է մեկ շինարարական նորիզոն կամ էլ մշակութային շերտ իսպառ բացակայում է։ 1-ին շինարարական նորիզոնի /վերին/ միջին հզրությունը 50-60 սմ է, իսկ 2-րդինը /ներքին/՝ 70-80 սմ։ Երկու հորիզոններն իրենց ընորոշ նյութերով թվագրվում են՝ 1-ը ուշ անտիկ ժամանակաշրջանով, 2-րդինը՝ նելլենիստական ժամանակաշրջանով։

Պեղումների ընթացքում բացվել են մոտ մեկ ասսնյակ ընակարանային համալիրներ, կազմված մեկ, երկու կամ երեք սենյակներից, դրանց հարող կցակառույցներից և բակերից։ Բնակարանների մեծ մասը հարում են եզրային /հյուսիսային և հարավային/ պաշտպանական պարիսպներին։ 3-4 մ լայնությամբ մի փողոց, որը դեռևս ամբողջովին բացված է, բաժանում է ընակավայրի միջին մասում տեղադրված ընակարանները հյուսիսային պարսպին կցված ընակարաններից։ 1-ին շինարարական նորիզոնի պատերը հիմնականում դրված են 2-րդի պատերի վրա։ Միայն պեղավայրի մի քանի հատկածներում են ակնհայտ շեղումներ երկու հորիզոնների կառույցների միջև։ Շինարարական տեխնիկան նույնն է։ Պատերը շարված են միջին չափսերի մեջքած քարերով և շղամի օճնությամբ։ Բացառություն են կազմում 1-ին շինարարական նորիզոնի եղևնածն շարված մի քանի պատերը։ Մի քանի սենյակների միջին մասերում գտնվել են սյան խարիսխներ հիշեցնող կլոր կամ ուղղանկյուն քարեր։

Շամիրամի անտիկ ընակավայրի սենյակներում բացվում են տարեկ կառուցվածքի և կիրառության թոնիրներ և թոնիր-կառարաններ, հատակագծենում ուղղանկյուն, կանոնավոր ասլերով շարված անտեսական նորեր։ Մեծ քանակություն են կազմում աշխատանքային գործիքները՝ աղորիթներ, երկանք, սանդեր, կոկիչներ, ձնումներ և այլն։

Բնակավայրում գեղակշռում են կոպիտ մշակված կենցաղային նըշանակության խեցեղենի բեկորները։ Այնուանդերձ, գտնվում են նաև նուրբ մշակված, երեսմն գունազարդված նելլենիստական ժամանակաշրջանին վերաբերող խեցեղենի բեկորներ /թասեր, ափսեներ, զնդանե գավթներ և այլն/։ Խեցեղենը հիմնականում բեկորային վիճակում է։

,,ԹԱՅՄԻ ԲԵՐԴԻ” ԱՄՐՈՑԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ

1984 թվականին ԵՊՀ-ի հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի ջոկատը շարունակեց Թալինի շրջանի Կաթնաղջյուր գյուղից 1,5 կմ հարավ-արևելք գտնվող ,,Թաթարի բերդ” ամրոց-բնակավայրի պեղումները, նպատակ ունենալով ամբողջացնելու 1979-1980թթ. շստ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ժեռնարկված աշխատանքները:

Ամբողջապես գեղվեց ամրոց-բնակավայրի հարավ-արևմտյան մասում գտնվող նո.1 աշտարակամեջ՝ համալիրը: Համալիրի պատերն ունեն կանոնավոր շարվածք; և կառուցված են մեղքած տուֆ քարից: Բացված սենյակի կենտրոնում իրար գույզաներ գտնվեցին տուֆից պատրաստված կլորավուն երկու խարիսխներ: Սենյակի ճայռոտ հատակի մեջ փորված էր սանդի: Հյուսիսային պատի տակ գտնվում էր ժայռն լայն հարթակը: Բնակարանի հատակի անհարթությունները լցված էին կազե շաղախով: Մառանը բնակելի հատվածից բաժանվում էր միջնապատով, որի ներքևի մասում գտնվեց քառակուսի փոքր մուտքը:

Ամրոց-բնակավայրում բացվել են երկու ուղիղ փողոցներ /լայնը մինչև 310 սմ/։ Փողոցները հատման տեղում կազմում են Τ-աձև խաչմերուկ: Փողոցների երկայնքով տեղադրված են բնակարանային համալիրները: Համալիրների մուտքերը անմիջապես բացվել են փողոցի վրա: Փողոցների համար որպես հատակ ծառայել է խնամքով հարթեցված ժայռը: Գածոնները հիմնականում կազմված են սև և կարմիր գույշնի խեցեղենի բեկորներից: Գտնված կարասների, կմումների, զավերի որոշ բեկորներ զարդարված են սանրածն նախշերով: Կանթերի մի մասը զարդարված է մեկ կետից ելնող երեք ծառազայթների մոտիվով: Գեղումներից գտնվել են նաև երկաթյա նետառալաքներ, որպես խաղալիք կամ հմայիչ ծառայող անցքով մաներ, ապակյա սրվակի բեկոր, երկանքներ, կենդանիների ոսկորներ: Մառանի հատակի վրա կային հորերի կամ կարասների բերանը փակող սրբառաշ քարե կլոր խուփեր: Գտնված իրերը և շինարարական կառույցները բնակավայրը թվագրում են մ.թ. 2-5-րդ դարերով:

ԵՐՄԱՆԻ ՄԻՋԱՎԱՐԹԱՆ ՀՈՒՅԱՐՁԱՆԻ  
ՊԵՂԻՆՄԱՐԻ ԽԱԽԱՎԱԿԱՆ ՄՐԴՅՈՒՆՅՐԸ

Եշմիածին քաղաքում բարեկարգման աշխատանքներ իրազոր ծելուն գուցընթաց ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ուղերթային գիտարշավը 1979թ. զարնանը հնագիտական ընույթի պեղումներ է իրականացրել քաղաքի մշակույթի տառ զբոսավագում։ Շուրջ մեկ մետր զետներես պահպանված հնավայրում, պեղումներով բացվել է սրբատաշ կարմիր տուժ քարով շարված չորրորդ դարի միանավ բազիլիկ եկեղեցու /չփերը 8,5 15,5 մ/ եռամատիման հիմնապատճեններ, հիմնապատճեններ։ Հարավային որմի արևելյան հավածօւմ պահպանվել է խորանի որմածքի մեկ շարքը։ Եկեղեցու որմատմույթերի հարդարանքը կրկնում է 4-7-րդ դարերի նման տիպի կառույցների զարդարանքին։ Հնագիտական աշխատանքների միջոցին եկեղեցու մեջ բացվել է հնաձնի հավածքը։ Հյուսային պատի մոտ հայտնաբերվել են ուռուցիկ իրանով, վերադիր լայն ժապավենով գոտեկորված միջին մեծության ամբողջական վեց կարասներ, որոնց ունեն տուժ քարից կափարիչներ, կարասներից երեքի շուրջերին նշմարփում են, ան, ան, ան տառերը, որոնք թերևս անոթների ծավալը, առողությունն են մատանշչում։ Այդօրինակ կարասների /թերի/ նմուշներ հայտնի են Անի, Դվին քաղաքներից։ Եկեղեցու շուրջը հայտնաբերվել են մարտարապետական մանրամասներ, հավասարաթև խաչ, կենաց ծառ պատկերով զարդարանքիներով կղմինդրներ մակառներ։ Ուշագրավ են այսուհետ բացված երկթեք սրբատաշ և սալ քարերով սալարկղային դամբարանները, տուֆակերտ սարկոֆագները, որպիսից հայտնի են Հոփիսիմե տաճարի բակի դամբարանադաշտից Աղո, Արութ, Գեղաշեն, Զովունի, Ճրկեժ և այլ կաղ միջնադարյան հնավայրերից։ Մեծ հնագրքություն է Ներկայացնում եկեղեցու հարավային պատի տակ հայտնաբերված 7-րդ դարի դամբարանը, որի երկթեք շիրմաքարի լանջերին երկաթապրով փորագրված է ԱՅՍ ՏԱՊԱՆ ԽԵՂԱՆԱ ԱՊՈՀԻՊԱՑ ՊԱՏՐԻՆ է ... ԱՐՈՒՆ [Ղ] ԾՍԻՑ ԾՈՐԴԻՈՅ արձանագրությունը։ Խեշանը հիշատակված է Սերենոսի պատմության Եշմիածին արքաների Այրարատ Ներեխուժելու տոիթով։ 7-րդ դարի այս արձանագրության հայտնաբերումը, գառանները թելաղորում են ընթացիկ տարում Եշմիածնի այս հնավայրում հնագիտական աշխատանքները շարունակելու սննդաժեշտությունը։

ԴՎԻՆԻ ԱՐԺԱՎԱԽՄԲԻ 1983-1984 թթ.

ԱՇԽԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՎԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. ԴՎԻՆԻ արշավախումը զերջին երկու տարիներին պեղումներ է կատարել քաղաքի միջնաբերդում, քաղաքային թաղամասերում և մոռակա Տիկնունի ամրոցում։ Նարունակվել են ուսումնասիրությունները արհեստագործական արտադրանքի, քաղաքաշինության, քաղաքային ընակչության սոցիալական վիճակի, 2երազրության, քաղաքի տեղագրության և այլ բազմաթիվ հարցերի շուրջ։

2. Կենարունական թաղամասում շարունակվել են աշխատանքները 5-6-րդ դդ. կաթողիկոսական պալատի շրջակայքում։ Հիմնականում պարզը կում են պալատին կից կառուցվածքների նշանակությունը, դրանց հասագածային առնչությունները պալատի հետ։ Հարավային մասում բացվել են բավականին հասա /3,1 մ/ քարաշար պարսպի մնացորդներ, որին հենվում է պալատի հարավային սեննկաշարը։ Պատի արևմտյան մասում բացվել է կրակապաշտական մեջյանի հյուսիսային պատի հատվածը։ Մեծ աշխատանքներ են կատարվել մշտելու 9-րդ դարի շինությունների շերտագրական պատկերը, գտնվել են մեծ քանակությամբ նյութեր /խեցեղեն, մետաղ, պատկի/։

3. Միջնաբերդի արևմտյան հատվածում պեղվել է նախորդ տարիներից հայտնի առևտրաբանական թաղամասի վերին հարթակը, որտեղ բացվում են ընտրոշ հատակագծային գտնվերով աշխարհիկ ընակելի տարի մնացորդներ։ Գտնված նյութերը շատ հետաքրքիր են քաղաքի գոյության վերջին շրջանի անառաջարկան, մասնավորապես արհեստագործության ուսումնասիրության առումով։

4. Միջնաբերդի հարավային պարսպի շրջանում հիմնականում պեղվել է կրաշաղախ պատերով մեծ շինության մի հատվածը, որոշվել են նրա ժամանակագրական սահմանները /5-11-րդ դդ./, առկա վերակառուցումների փուլերը։ Պեղավայրում կատարվել են 10-13-րդ դդ. համար շերտագրական կտրվածքներ։

5. Միջնաբերդի գագաթում շարունակվել են վաղմիջնադարյան և հելլենիստական շրջանի կառուցյաների պեղումները։ Հատակագծային որոշ հարցեր պարզելու նպատակով բացվել են գանձատ դահլիճի /4-րդ դդ./ արևմտյան պատի ներսի երեսը և անկյունները։ Գտնվել է պալատի քիվի մի բեկորը։ Հելլենիստական շրջանի սենյակները քարաշար պատերով են և նախորդ տարիներին բացված սյունազարդ սենյակի հետ կազմում են

Մի ամբողջություն:

6. Բաղացի արևմտյան թալամասերից մեկում գառահականորեն հայտնաբերվել են թրծման հնոցի մասցրդներ /արամագիծը մոտ 0,8 մ/։ Հնոցի միջից գտնվել են եռոտոնիներ, պատրաստի և խոտանված արագիանք։ Նյութերի քննությունը ցույց է տալիս, որ 12-13-րդ դդ. Դվինի խեցեղենի գարասաման արհեստանոցները իիստ մասնագիտացված են եղել ոչ միայն տեսականու, այլև զարդերի գծով և մասսայական արագիանքեր են շուկայի համար։ Հնոցը գտնվել է քաղացի այն տարածքում, որտեղից հայտնի են խեցեղենի արհեստանոցների հետքեր և մեծ քանակությամբ թրծման պարագաներ։

7. Հետախուզական պեղումներ են կատարվել նաև Ծիկնունի ամրոցում, որտեղ քացվել է մոտ 100,0 քառ.մ տարածք։ Ներաի խորությունը ասասնկում է 0,2-0,6 մ, քացվում են թրծած աղյուսից գատերի հիմքեր, տարեր հատակագծերով սենյակների մասցրդներ, ինչպես նաև քարաշար պատերի հիմքեր։ Գտնված նյութերը հիմնականում հափամասալեր են և լուսամուտի պակիները /քեկորներ/, որով ենթադրվում է տեղում ինչ-որ մոնումենտալ շինության առկայություն։ Ցեղում հայտնաբերված խեցեղենը թույլ է տալիս այն թվաքարել 13-14-րդ դդ.։

#### Փ.Ս.ԲԱՐԱՑՅԱՆ

#### ԴՎԻՆԻ ՍՏՈՐԻՆ ԲԽՐԻՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Հայտատանի միջնադարյան մայրաքաղաք Դվինի սոցիալ-անտեսական կյանքը լուսաբանելու համար կարևոր տվյալներ են հաղորդում միջնաբերդի ստորին լանջի տարածքում կատարվող պեղումները, 1983-1984 թվականներին արշավախումբը հնագիտական աշխատանքները շարունակել է պեղավայրի երրորդ դարավանդում, որտեղ քացվել են ընակելի, անտեսական և արտադրական նշանակության կտորները, պեղումների ընթացքում քացահայտվել է դրանց հատակագծային և ծավալատարածական առանձնահատկությունները։

2. Շինությունները ունեցել են անկանոն գետաքարերով շարված հիմքեր և հում աղյուսի պատեր, որոնցից մի քանիսի վրա պահպանվել են կավի, ինչպես նաև սպիտակ սպաղի հետքերի նկատմամբ են շինարարական տարեր հորիզոններ և պատերի վերակառուցումներ, արահայտված իրար հաջորդող հատկներով։ Որոնք վերաբերում են թալամասի գոյության վերջին հարյուրամյակին։

Հիմնապատով առաջնացված մեծ սենյակները բարակ միջնապատով  
բաժանվել են առընթե նպասակի ծառայող հատվածների: Զափերով դրանց  
հավասար են եղել /16-20 քո.մ մակերես/ և հաղորդակցվել են նեղ  
միջնացներով ու իրար մեջ բացվող մուտքերով: Կառույցները ունե-  
ցել են կավածեփ, ինչպես նաև աղյուսաշաք հառակ: Բացվել են բազ-  
կանին թվով թոնիներ, որոնցից առավել մեծները ծառայել են արտադրա-  
կան նպասակի: Դրանցից ոչ ներու բացվել են աշխատանքային քարե գոր-  
ծիքներով և խցեզործական խոռանված բեկորներով լեցուն ոչ խորը,  
ուղղանկյուն փոսորակներ:

3. Եինությունների հառակին թափված հարդախտան հողը և այրված  
գերանների մասցորդները հավաստում են աների հարթ տանիքների և  
դրանց ասիմմանամէ դասավորության իրողությունը:

4. Գեղումներից հայտնաբերվել են բազմաթեսակ նյութեր կամ չը-  
նարակած և համապակե անոթներ, ձիթաճրագներ, կարասներ և կմումներ,  
ապակե իրեր, զարդեր, մետաղե առարկաներ, պլնձե դրամներ: Կավանոթ-  
ներից մի քանիսի վրա կան արտադրական նշաններ:

Գառանների նախնական թնդանությունը թույլ է տալիս եզրակացնելու,  
որ պեղվող հատվածը արհեստավորական թաղամաս է եղել: Թաղաքի գոյու-  
թյան վերջին հարյուրամյակում այսպես պղող ընակիչները շարունա-  
կել ու զարգացրել են քաղաքային կյանքը: Նրանք տեղում պարաստել  
և վամարդի են հանել արհեստագործական արտադրանքի հիանալի նմուշ-  
ներ: Ամբողջական և թերի իրերի այս հավաքածուն նախորդ արիների  
պեղումներից ի հայտ եկած նյութերի շինարարական համալիրի հետ միա-  
սին թվազգվում է 12-13-րդ դդ.:

#### Ն.Գ.ՀԱԿՈԲՅԱՆ

#### ԴՎԻՆԻ ԿԵՆՑՐՈՒՄ ԹԱՐԱՄԱՍԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1. Դվինի հազիւածական արշավախումբը ական աշխատանքներ է  
տանում քաղաքի կենտրոնական թաղամասում: 1983-1984թթ. դրանց կենտ-  
րունացվեցին հիմնականում 5-6-րդ դդ. պալատական համալիրի հարավ-  
յին, հյուսիսային և արևմայուն թերություն: Հարավային թերու շարու-  
նակվել են պեղումները հարավկող սենյակների հասակագները մշգրանցու  
և պատերի սահմանները որոշելու նպատակով:

Պալատի հյուսիսային մասում պեղումների միջոցին բացվեց սյու-  
նազարդ դահլիճի հյուսիսային որմին գուգաներ գնացող միջանցքի քա-

վականին մեծ մի հատկած և նրան կից տնտեսական նշանակության սենյակ՝ զլաքրերի կանոնավոր շարպածք ունեցող հատակով։ Ուշագրավը սենյակի կենտրոնում բացված 9-րդ դ. հորն է ապակե տարածեսակ տուրկակաների մնացորդներով։

2. Պալատի արևմտյան թևում պեղումներ մեռնարկվեցին առուշակ արևմուտք և յուսիս, ի հայտ քերելով շերտագրական հետաքրքիր պատկեր։ 8-9-րդ դդ. պեղվող տարածքը եղել է խիտ կառուցապատված։ Դրանց ընակելի տնտեսական ընույթի աղյուսառորմ, կավածեփ հատակով մեծ ու փոքր սենյակներ, որոնք ավերվել են 9-րդ դ. երկրաշարժի ժամանակ։

3. 10-11-րդ դդ. սույն հատվածը վերստին վերաբնակեցվել և կառուցապատվել է, բայց ոչ կանոնավոր հատակագիծ ունեցող շինություններով, նմողելով 9-րդ դ. շինարարական, հատակագծային հստակ պատկերը։ Վերջիններս լիովին կամ մասնակիրեն ոչնչացվել են 15-18-րդ դդ. թաղումների հետևանքով։ Պահպանվել են պատերի և բազմաշերտ հատակների կտորներ։ Հյուսիս-արևմտյան հատվածում թաղումները հեռացնելուց հետո բացվել է հորից և աղյուսաշար առվակից կազմված ջրահեռացման կանոնավոր սիստեմ։ Նման հորերը հազվադեպ չեն կենտրոնական թաղամասում։

4. Իվերջո պեղումներով մեռք է քերվել հնագիտական նյութերի հարուստ ընտրանի, ապակե գունազարդ անոթներ, հասարակ և ջնարակապատ երեսներանգ խեցեղեն, մետաղ բազմաքանույթ առարկաներ, դրամներ, ոսկորե և փայտե զարդեր, որոնք լայն հնարավորություն են ընձեռում բազմակողմանիրեն ուսումնասիրելու 9-րդ դ. նյութական մշակույթն ու արհեստագործական արտադրանքը։

#### Ա.Ս.ԺԱՄԿՈՉՑԱՆ

##### ԴՎԻՆԻ ՄԻՋԱՄԱՐԵՐԴԻ ՀԱՐԱՎԱԹԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1. Դվինի միջնաբերդի հարավային հատվածում 1983-1984թթ. պեղումները հիմնականում կենտրոնացվել էին տեղամասի վերին շերտերի ուսումնասիրման և տակավին 1979 թվականից պեղվող վաղ միջնադարյան մոնումենտալ կառույցի շինարարական առանձնահատկություններն ու բռնույթը որոշելու նպատակով։

2. Պեղավայրի վերին շերտերը ներկայացված են ընակելի աղյուսաշեն կամ քարաշեն շինություններով, որոնք տասնամյակների ընթացքում վերակառուցվելով, ստեղծել են նախնական տեսքը խաթարող պատ-

կեր՝ Հասակները հիմնականում կավածենք կամ աղյուսաշար են։ Կառույց-ներին ընորոշ են հարուստ նյութերով հագեցած տնտեսական հորերը, առցեր չափերի թույրները, մեծածավալ կարաները և այլ առարկաները, որոնք հետաքրքրի պատկեր են առլիս Դվինի 11-18-րդ դդ. Նյութական մշակույթի ուսումնասիրման համար։

3. 12-18-րդ դդ. շերտերում զանված խեցեգործական արագարական խորանը և այլ նյութերը, ենթադրել են առլիս տեղում խեցեղենի և զարդերի պատրաստման արհեստանոցների գոյությունը։

4. Աշխատանքները շարունակվել են վաղ միջնադարյան մեծ կառույցի հավածում։ Խախորդ արքիներին շենքի հարավային որմը բացված էր 28 մ., իսկ արևելյանը 15 մ երկարությամբ։

Գեղումներով պարզում է, որ շինության գահպանված պատի բարձըրությունը 6 մ. է, որը շարվել է մեծ զետաքրերով և տուժով կրաշափակ հիմքի վրա։

Նրկու անգամ վերանորոգված այս հոյակերտ կառույցի հիմքերը դրվել են վաղ երկաթի շրջանի մշտելու թային շերտի վրա /մ.թ.ա.9-8-րդ դդ./։ Կառույցի նախական հասակի վրա հայտնաբերված նյութերը տուժով կրաշափակ 5-7-րդ դդ. հասարակ խեցանոթների բեկորներ են, ինչպես նաև ուկրային մասցորդներ։

Այս շենքը, ակներեաբար, կործանվել է 893թ. երկրաշրժից, կորցը եր կարևորությունը և այլևս չի վերականգնվել։ 11-րդ դարում, միջնաբերդի պարապի վերակառուցման ժամանակ, բանդված և հարթեցված մոնումենտալ շենքի տեղում պաշտպանական նպատակներով հարավային պատի վրա կառուցվել է հում աղյուսի մի մեծ աշտարակ և բարաշեն շինություններ։

Գալիք պեղումները կպարզեն վաղմիջնադարյան մոնումենտալ հզոր շինության թունկցիոնալ նշանակությունը։

### Ս.Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

#### ՄԱՐՄԱՃԵՐԻ ՊՐԵՍԵՐՎԱՑԻՈՆԻ

1. 1983-1984 թվերին պեղումները կատարվել են Տիրաշեն ընակավայրի արևելյան և արևմտյան հասածներում, Մարմաշենի վանքի հյուս-արևմտյան և արևմտյան մասում։

2. Տիրաշենի գորակայանի /միջնաբերդի/ հարավ-արևմտյան կողմում բացված շինություններից 3-ը կայազորի տեղաբաշխման բաղկացու-

ցիշ մասերից են և դրանց ախոռներն են: Շինությունների ներքին կառուցվածքը /սալարկած հատակ, մսուր և այլն/ ինչպես և արտաքին միշտ շարք կառուցողական համամանքներ վերոհիշյալի ապացույցներ են: Հայտնաբերված հազարական նյութերով դրանք թվազրկում են 10-11-րդ դարերով՝ Պարզվում է, որ Տիրաշենում տեղաբաշխված զորքը հեծելազոր է եղել և զորակայանում ապրել են միայն գինվորները, իսկ նրանց ժիերը և ուրիշ անհրաժեշտ պարագաներ տեղաբաշխվել են ամրացված զորակայանից դուրս՝ Տիրաշեն ընակավայրի տարածքում:

3. Մարմաշենի կաթողիկե եկեղեցու հյուսիսային պատի 1225 թվակիր արծանագրության մեջ խոսվում է այն մասին, որ վանքը անօրենների /սելչուկ-թուրքերի/ կողմից ավելիվել էր և վեր էր ածկել զյուղի, կաթողիկե քերդանման ամրացվել էր և , . . կայր ի խափառի և ի սպավորության': Մեծ ջանքերի գնով Գրիգոր արքեպիսկոպոսին իր եղբայր Խարիթի օգնությամբ հաջողվում է շինականներին նեռացնել և վերականգնել վանքի նախկին շուրջը: 1988-1984թթ. պեղումներով բացված 12-13-րդ դարերին վերաբերվող շինարարական շերտը վերոհիշյալի ապացույցն է: Դրանք փոքր նրմիթներ են՝ ծուռ ու մուռ պատերով՝ ընակարանային կոմպլեքսների ոչ հատուկ հատակագծումներով: Խճողված են ինչպես ընակարանային կառույցներն ու նրանց օժանդակ մասերը, այնպես էլ վանքի տարածքի տարբեր մասերը տանող նանապարհներն ու ուղիները: Կենցաղային առարկաների մեջ զերակշռում են ջնարակած և ոչ ջնարակապատ նեցեղենի հասարակ տեսակները, կան նաև առակե ապարանջանի գեկորներ:

4. Վերոհիշյալ շերտից անմիջապես ներքև բացվում են կոպտատաշ տուֆե միջին մեծության քարերով, կավե շաղախով շարված պատերով շինություններ: Պատերը հաստ են և ուղիղ: Կառուցված են վերին աստիճանի խամքրով: Հատուկ զճագրվում են ինչպես տարբեր ընակարանային կոմպլեքսները, այնպես էլ դրանց բաղկացուցիչ մասերը: Բացված փողոցները ուղղիղ են և նայած նպասակին ունեն տարբեր լայնություն: Պարզված է, որ վանքի պարսպապատ ամբողջ տարածքը կառուցապատվել է եկեղեցական կառույցների հետ միաձամանակ և իրականացվել է միասնական ծրագրով: Այդ տարածքում համապատասխանաբար տեղադրվել են ինչպես եկեղեցական և վանական /եկեղեցիներ, վանականների համար ընակարաններ/ այնպես էլ արտադրական /տարբեր ար նեստանոցներ/ և պաշտանական /պարիսպներ, մուտքեր, մանապար հներ/ կառույցները:

5. Զաքարյան շրջանին վերաբերող շերտում ինչ-որ շափով նկառվում է կառուցապատաման հստակությունը և որոշակիությունը: Սակայն

Նետազա դարերին վերաբերող շերտերում գերիշխում է խմողկածությունը:

### Ռ.Հ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

#### ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՃԵԳՐՏՈՒՄՆԵՐ

,Անանիայի Շիրակունույ համարողի ասացեալ ի զատիկն Տեառն՝ մեկնության հիշատակարանում զրկված է. . . . եւ քանզի չեն տեղեակ քազումք թուոց, մանաւանդ շինականք, եւ վարդապետութիւն Տեառն մերոյ տարածեցաւ կալաւ զաշխարհ ամենայն, վասն այնորիկ հինգ հարիւր երեսուն եւ երկուց ամաց միանգամայն համարեցա ըստ թուոյ Աղեքսանդրացւոց ի Պիլ ամէն մինչեւ յամն ՌՅԿ, այնոցիկ որոց կացցեն յաշխարհի, կազմեցի ես Անանիայ որդի Յովհանիսի Շիրակունույ եւ դրումեցի առանձինն զընաւ մի մի ամ ՇԼԲ, իլ կանոն, որովք զամենայն համարն ըովանդակեցի ՇԼԲ կարգ, եւ զատի կն մեկնեցի զմի մի կարգ առ մի մի առի՞:

Առաջարկում է ընազրում փաստազրկած , ըստ թուոյ Աղեքսանդրացւոց՝՝ ի փոխարեն դնել , , ըստ թուոյ հոռմեացւոց՝՝ կամ , , ըստ թուոյ Աղեքսանդրացւոց՝՝ ի տակ հասկանալ հայկական տոմարական ընազրերից հայանի հոռմեական մեծ թվականը /=247/: Այս սրբազրումը կամ դիտողությունը ընդունելու դեպքում հիշատակարանում եղած թվականները վերծանվում են հետևյալ կերպ

$$1/828 - 247 = 581 \text{ թ.}, 2/1360 - 247 = 1113 \text{ թ.}$$

Հիշյալ թվականները հաստավում են այլ Վկայություններով:

Անանիա Շիրակացու և Հովհաննես հմաստասերի զատկի մեկնությունների համարժեք Վկայություններից հետևում է, որ հասյանները, Շիրակացին / և հետազյում հմաստասերը / թեև ՇԼԲ պարբերաշրջանի առաջին տարին / 559թ./ սկսել են, երբ Լուսնի լրումը նիստն 23-ին / ապրիլի 13-ին / եր շարունակելով Անդրեասի 200-ամյակը / սկիզբը՝ 353թ. ավարտը՝ 552 թ./, բայց առաջին տարին համարել են հասյանները՝ 562թ., Շիրակացին՝ 581 թ. հմաստասերը՝ 1094 թ. երբ լուսնի լրման օրը ապրիլի 4 / նիստնի 14/ եր:

Հայանի է, որ Աքրանամը կաթողիկոս է ընտրվել 607 թ., որից հանելով Մովսես կաթողիկոսի 30 տարիները ստանում ենք Մովսես կաթողիկոսի 1-ին տարին /=577 թ./, որին գումարելով մատենազրությունից հայտնի այն փաստը, որ տոմարի կարգավորումը եղել է նրա 4-րդ տարում, կրկին ստանում ենք 581թ., որը 19-ամյա պարբերաշրջանի 10-րդ

առին է: Այստեղից հետում է, որ Հովհաննեսի կաթողիկոսության տոշին առին եղել է /577-17=/ 560թ., իսկ ներսեսինը /560-9=/ 551թ.:

581թ. քաջանայտումը հարավորություն է առլիս պարզություն մացնելու հայկական մեծ տոմարի և թվականի հետ կապված մատենագրական վկայությունների մեջ և ունենալ հետեւալ պատկերը: Ներսեսի կաթողիկոսության առիններին Անդրեասի 200-ամյա շրջանը պարագել է /552թ./: Մատենագրությունից հայտնի է, որ նրա 3-րդ կամ 4-րդ առում ըստ Մ.Օրմանյանի 554թ. Դվինի եկեղեցական ժողովում հավանաբար խոսք է գնացել հետազայում տոների, հատկապես զատկի կատարման մասին, ըստ մատենագրական վկայությունների առաջնորդվելով 19-ամյա պարբերաշըրջանով: Հետազայում պատմիչները և տոմարագետները հետադարձ հաշվով ստացել են հայկական մեծ թվականի առաջին առրին, որը իսկապես եղել է ներսեսի կաթողիկոսության առիններին և սխալմամբ հայկական տոմարի ու թվականության ստեղծման կարգադրությունը վերագրել նրան: Հովհաննես կաթողիկոսի ժամանակ հայտնաբերվել և օգտագործվել է հասյանների ստեղծած ՇԼԲ պարբերաշըրջանը և հետադարձ հաշվով ստանալով ՇԼԲ-ի 1-ին առրին /562թ./, որը իսկապես ընկել է Հովհաննեսի կաթողիկոսության առիններին և նույնպես սխալմամբ նրան վերագրել հայկական մեծ տոմարի և թվականության իրականացումը: Հայկական տոմարի և թվականության մասին, ինչպես տեսանք, Մովսես կաթողիկոսի պաշտոնական կարգադրությունը իրականացվել է 581թ. Նրա 4-րդ առում, որին և հետևել է Շիրակացին և կազմել իր ՇԼԲ-ն, սկսելով 581 թվից և պարտելով 1113 թ.:

581 թվից Շիրակացին 28-29 առիններ ետ է գնացել, որպեսզի ըսկըսի Անդրեասի 200-ամյա պարտին հաջորդող առաջին տարուց, այսինքն՝ հայկական թվականի սկզբից: Պարզ է նաև, որ մատենագրությունից հայտնի հայկական մեծ թվականով սկսվող թվերը 1-30, հետազայում հետադարձ հաշվով ստացված թվեր են:

Շիրակացու ՇԼԲ-ի ներքին օրինաշափությունների քաջանայտումը հայկական մեծ թվականության և տոմարի մասին եղած մատենագրական տեղեկությունների և քննության ենթակա ժամանակի կաթողիկոսների շարքի վերլուծությունը թույլ է առլիս պնդել, որ առաջարկված թվականների վերծանությունները և որոշ թվականների մշագրանցումները կարելի են ընդունելի համարել:

ԱՌԱՋԱՋՈՒԻ ՄԻ ՆՈՐՄԱՅԻ ԱԽՋԱՄԻ ԵՎ ՆՐԱ  
ԱՐԴՅՈՒՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատմական Արցախի Առաջածոր գյուղի / Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի Մարտակերտի շրջան/ շրջակայքում, Կանունց սար կոչվող լեռան հարավային ոստի վրա նկատելի մի քանի շինությունների ավերակներ, որոնց կից ցրված են սակավաթիվ խաչքարեր և քանդակազարդ քեկորներ։ Դրանց շարքում առանձնանում է մի խաչքար /2,10մ երկ., 0,84 մ լայն./ հարուստ զարդարանդակներով և ուշագրավ արձանագրությամբ։

,թՎ : 22/1257թ./ հենանութե՞-թն ԱԱԱԱ/ին, ՊԱՏՐՈՆՈՒԹԵՐՆ  
ՀԱՍԱՆՑ/ ԱԱ' ՍԱՀԼՈՒԽ ԳԱՍԹԵԼ ԵՄ Ի ՄՈՒԼՈ/ԻԴՆ ՈՒ ԳԱՍԹԵԼ  
ԵՄ Ի ՄՈՒՆԹ ՈՒ ԳԱ/ԱՑԵԼ ԵՄ Ի ԿԱՍՄՐԻՑ. ՈՒ :Բ: ՀԵՏԻ Ի  
ԱՐԱՋՄ ԵՄ ՄՑԵԼ ՈՒ ԽԱՊԱՌՈՒԹ / Ի ԴՈՒԽ ԵԿԵԼ: ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉ  
ԻՆՉ ԵԱ Ա/ՄՈՒԽՈՑ ԻՆՈ. ԵԱՂԻԹԸ ԹԻՇ/է՛ ՍԱՐ/ԱԻՐԸ ԹԻՇՑԵ՛ :

Արծանագրության մեջ հիշատակված ժալալը ակներևաքար Խաչենի իշխան Հասան-Քալալ Դոլան է /1214-1261/: Դատելով արծանագրությունից՝ պատրոն Հասանը Սահլունի անմիջական սյուզերենն էր, որի գլխավորությամբ վերջինս մասնակցել է մոնղոլների արշավանքներին դեպի հսմայիլիս աղանդավորների՝ մուլհեղների երկիրը / ի Մուլուղն/ և Փոքր Ասիա / ի Կասարիայ/։ Արծանագրության մեջ հիշվող երկու մարտերին /:Բ: առազմ/ Սահլունը մասնակցել է նենց այդ վայրերում։  
Ինչ վերաբերում է Սոնեթ-Սպանեթ զնալուն, որն ըստ արծանագրության տեղի է ունեցել մինչև Կեսարիայի գրավումը /1257թ. գարուն-ամառ/, ապա առկա փաստերի հիմամբ կարելի է ենթադրել, որ Սահլունը իր պատրոնի հետ այնտեղ է մեկնել մոնղոլական որևէ ջոկատի կազմում։

Արծանագրության հաղորդած տվյալների համարումը մատենագրական տեղեկությունների հետ, հարավոր է դարձնում պարզել հիշատակված դեպքերի ամենահավանական ժամանակը՝ 1256-1257թթ.։

Արծանագրության մանրակրկիտ քննարկումը՝ խաչքարերի խնդրագրական կանոնիկ տեքստերի համարումամբ, հարավորություն է ընձեռում ավելի ընդարձակելու հայկական խաչքարերի կանգնեցման շարժառիթների և նպատակների շրջանակը։

Արժանագրության տեքստի պարունակությունը որոշակիորեն ազդել է նաև նրա լեզվի վրա։ Նվազական է, որ այսաեղ տեղ են գտել միջին հայերենի և բարչառային մի շարք ձևեր, որոնց գոլիս են լրացնելու ժամանակի խոսակցական լեզվի մասին մեր ունեցած պահերացումները։

### Բ. Լ. ՄԱԴՐԵՍԱՆ

#### ԴԻՑՈՂՈԹՑՈՒԽՆԵՐ ԱՐՄԱԳԱՇՈՒԽՆԻ ՎՈՂ ՄԻՋԱՄԱՐԹԱՆ ՊԱՇՊԱՍԱՎՈՆ ՀԱՄԱԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

1. Արագածոտնը, որպես Արարատյան դաշտի մատուցյաներից մեկը՝ կարենոր պաշտպանական նշանակությունը է ունեցել դեռևս մ.թ.ա.3-րդ հազարամյակից։ Արագածոտնին, հատկապես նրա հյուսիս-արևմտյան հատվածին, սորտաթղթական մեծ նշանակություն է տրվել, ուստի և ամրություններով կառուցապատճել է կենարոնական, արօյական իշխանության կողմից։

2. Նշանակած արածեցում պահպանվել են մի շարք փոքր, բայց դժվարամաշչելի ամրոցներ /կաթնաղըյուր, Թալին, Մաստարա, Գառնահովիտ և այլն/, որոնք մի համակարգ են կազմում։ Սրանց մի մասը կառուցվել է 3-րդ 5-րդ դարերում և գոյատել ողջ միջնադարի ընթացքում։ Մյուս մասը, կառուցված լինելով մ.թ.ա. 2-1-ին հազարամյակներում, օգտագործվել է նաև միջնադարում /2յանքերդ, /Ղայթար/, Փոքր Բողուղալու և այլն/։

3. Նշանակած արածեցում կան նաև մեկ այլ տիպի ամրոցներ, որոնք պահպանվել են և գտնվում են դյուրամատչելի վայրերում։ Ըստ պատմիչների /Ծղիշե, Թարպեցի/ պայյալների, այս արածեցում նման ամրոցներ են եղել Կոչում, Աշխակում, Օշականում և Արուճում, որոնք համարվել են արքունի մմեռոց-գորակայաններ։

4. Հիշյալ ամրոցների Փունկցիոնալ տարբերություններին հետկում են նաև նրանց նախագծման, կառուցղական տեխնիկայի և այլ ընորոշ առանձնահատկություններ։ Այդուհանդեմ երկու տիպի ամրոցներն ել թվագրվում են ուշ անտիկից վաղ միջնադարը անցման շրջանով /3-4-րդ դդ./, ունեն որոշակի ընդհանուր տիպ և հստակորեն տեղադրվում են մի ընդհանուր պաշտպանական համակարգի մեջ։

5. Ձարգացած և ուշ միջնադարում վերոհիշյալ քոլոր ամրացներն այս կամ այն կերպ օգնագործվել են։

ԹԵՂԵՆՑԱՑ ՎԱՆՔԻ ՊԵՂՈԽՄՆԵՐԸ ԵՎ ԲԺՇԽԻ ՏԻ ԱՐՁԱՆԱ-  
ԳԸՐՈՒԹՅԱՆ ԱՐԹԻՎ

1. 1983-1984թթ. պեղումները Թեղենյաց վանքում շարունակվել են գավթի հյուսիսային հատվածում: Նրկամյա պեղումները ցույց տվեցին, որ այսօդ, մոտ 3 մ հաստության հողաշերտի տակ առկա է մի կառույց /պայմանականորեն կոչվել ենց սյունասրահ/։ Կառույցի հատակը սվաղված է։ Արևելյան կողմում բացվեցին երկու որմնասյուներ /հարավայինից պահպանվել է միայն որմնախարիսխը/։ Որմնասյուների միջնամասը շար- կած է սրբառաշ սև տուժաքարով։ Հատակից մոտ 1,20 մ. բարձրության վրա ճգկում է հորիզոնական՝ 30սմ. լայնությամբ հարթակը, որի վրա բարձրանում է եղբերում պարզ քանդակազարդեր ունեցող պատը։ Պատի կենտրոնում կանգնեցված է եղել գեղաքանդակ մի խաչքար, որից միայն ներքնի մասն է պահպանվել։ Նշված որմնասյուների նեմ-դիմաց բացվեցին երկու սյուներ իրենց խարիսխներով և խոյակներով, որոնց անկյուննե- րը հարդարված են առբեր նկարագրով ստալակիկածն քանդակներով։ Ի- րենց շափերով և ձևով նշված սյուները շատ նման են զավթի սյուներին։ Դատելով հյուսիսային պատի բացված հատվածից՝ կառույցի հիմնական պատերը շարված են եղել կոպտառաշ խոցոր քարերով։ Հյուսիսային պա- տը ետքի հողային զանգվածի մնշման տակ առաջ է թերքել։ Սյունասրահը, ամենայն հավանականությամբ, 13-րդ դարի առաջին կեսի կառույց է։

Պեղումների շնորհիկ հայտնաբերվեցին մեծ քանակությամբ հասա- րակ և չնարակած խեցեղենի բեկորներ։ Հասարակ խեցեղենը ներկայացված է առբեր նշանակության անորոշներով։ Կմուճներ, թասեր, կժեր, սափոր- ներ, կարասներ, ծիթաճրագներ և այլն։ Ձևարակած խեցեղենը հիմնակա- նում ներկայացված է թասերի նմուշներով։ Ուշագրավ է թասի շուրջի մի փոքր ընկոր, հավանաբար արքերեն կամ պարսկերեն արձանագրու- թյամբ։ Ձևարակած բեկորների վրա իշխում են սպիտակ հիմնագույնի վրա բուսական նախշազարդերը։

Մեծ է նաև մետաղյա առարկաների քանակը և անսականին։ Դրանցից կարելի է տունմասցնել սնկածն զլիներով տարբեր երկարության գա- մերը, քառակուսի և ուղղանկյուն կտրվածքով նետասլաքները, դանակի շեղերը և այլն։ 1984թ. առաջին անգամ պեղավայրում հայտնաբերվեց ապակի։ Սյունասրահի բացված հատվածում գտնվեց մի արձանագրված քար։ Տեքստը կիսատ է, հիշված է թեղենյաց վանք անվանումը։

Բջնիի ս.Աստվածածին Եկեղեցին հարուստ է Վիմագիր արձանագրություններով։ Իրեն քազմաքնությթ արժեցավոր Վկայագրեր դրանք նաև հանդիսանում են այդ կրոնամշակութային նշանակոր կենարոնի կառուցման և գործունեության պատմության ամենահավաստի սկզբնաղբյուրներ։ Եկեղեցու շինարարության նպաստակորողը միջնաբերդի ուղմաքաղաքական անվանի գործիչ, գիտական, փիլիսոփա, մանկավարժ Գրիգոր Բջնեցի Վասակյան Պահապունին է /հետագայում Մագիստրոս/։ Այդ տաճարի կառուցումն ավարտվել է 1031թ.։ Նույն թվականին Հայոց կաթողիկոս Պետրոս Գետաղարծի և Հովհաննես-Սմբատ արքայի հրամանով հաստատվում են Բջնիի եպիսկոպոսական թեմը և վանքապատկան տիրությունների սահմանները։ Այս իրադարձությունները գասաված են Եկեղեցու հարավային գատին, արտաքուստ Պետրոս կաթողիկոսի թողած ծավալուն արձանագրությամբ։ Նթե Վանքի հիմնադրման հանգամանքները շարադրված են վերոհիշյալ Վիմագրում, ապա անմիջականորեն շինարարության նեղինակի անունից կամ նրա հիշատակմամբ վկայագիրը ցայսօր հայտնի չէր։ Նվազագույնը մեզ հաջողվեց հայտնաբերել այդ Վիմագիրը, որը փորագրված է հյուսիսային որմնամույթի խոյակի արեկելահայաց երեսին՝ երեք տողով։

ՅԱ ԸՆ ՈՂՈՐՄԾԱ ԳՐ/հԿՈՐՈ ԽՇԱԱՍ ԻՇ/ԽԱՆԻ, ՈՐԴՈ ՎԱՄԱԿԱՒ:

Արձանագրությունը վկայում է, որ այն գրվել է Գրիգոր Բջնեցու մահվան կապակցությամբ /1058-9 թ./։ Սակայն, ինչպես հայտնի է, Բագրատունյաց թագավորության քարմաքումից հետո բյուզանդական արքունիքը Գրիգոր իշխանաց-իշխանին շնորհել էր մագիստրոսի տիտղոս, որով էլ նա հանդես է գալիս այդ ժամանակաշրջանի հայտնի մատենագիր և Վիմագիր աղբյուրներում։ Այս, առերեվությթ առկա հակասությունը թերևս պայմանակորված է նրանով, որ արձանագրությունը փորագրվել է Գրիգորի հայրենական նստացում ու հենց իր կողմից կառուցված Եկեղեցու որմին, ի հիշատակ ոչ թե բյուզանդական պաշտոնյաց Գրիգոր Մագիստրոսի, այլ տեղի իշխան և վասիթ հովանակոր Գրիգոր Պահապունի Բջնեցու։

#### Հ.Ս.ՆՍԱՑԱՆ

ՄԻՀԱՄՄԱՐԹԱՆ ՀՈՒԽԱՐԱՍԽՆԵՐԻ ՊԵՂՈԽՄՆԵՐԸ ԻՔՆՎԱՆԻ

#### ՇՐՋԱՆԱՊՈՒՄ

ՀԱՄԱ ԶԱ ՀՆԱԳԻԽՈՒԹՅԱՆ և ազգագրության ինստիտուտի հշեանի արշավախումը 1983-1984թթ. պեղումներ է կատարել Առաքելոց և Կիրանց նորանայտ վանական համալիրներում և Սարիգյանդ գյուղից 5 կմ արևելք ընկած ծականագիր բերքում Վիմագրության գյուղատեղիում։

Առաջելոց վանքը /12-13-րդ դդ./ գտնվում է Գետաշենից 3 կմ արևմուտք, Կիրանց գետի ձախ ափին, բարձր ժայռաբլուրի գագաթին, իսկ նրա առռնձին կառույցները և ընդարձակ բնակավայրը գտնվում են բլրի ստորոտին, գետի ափին։ Վանքի պարսպի ներսում պաղվեց երկու կացարան, գետի ափին՝ բաղնիքը։

Կացարանները ուղղանկյուն են 6,6 5,8 մ և 4 3,4 մ չափերով։ Պատերի լայնությունը 1 մետր է, շարքած կոպիտ մշակված խոշոր քարերից։ Հայտնաբերվեց հասարակ խեցեղենի՝ միականթ, երկկանթ սափորների, կմումների, ողակածեւ հասակով քրեղանների բազմաթիվ բեկորներ, գծագրություններ, սեպեզարդ և այլ նախշերով։ Գտնվեցին նաև ոչ մեծ քանակությամբ ջնարակած թասերի բեկորներ և կապավուն հախմապակուց թասի փոքրիկ բեկոր, մեկ երկաթի դանակ և պայտ։

Բաղնիքի համալիրում՝ բաղկացած 10 խոշոր սրահներից, պեղվեցին երկուսը՝ նո. 1-ին և նո. 8-ը։ Առաջին սրահի պատերի մեջ, որոնք աեղանդ ապահոված են մինչև 1 մ բարձրությամբ, գտնվեցին կավե խողովակներ՝ ծուլսը հեռացնելու և պատերը առացնելու համար։ Սենյակների համակաները հարդարված էին 26 14 5 սմ չափերի թրծված աղյուսներով, որոնք սպազմել են կրի և մանր ավազի շաղախով։ Հայտնաբերվեցին նաև ջրառար խողովակներ, որոնք ճգնավոր էին բաղնիքից մինչև 300 մ երկարությամբ։ Գտնվեցին մեծ քանակությամբ ջարդված կավե խողովակների, ջնարակած և հասարակ կմումների ու քրեղանների բեկորներ, ուղղանկյուն կողմինքի բեկոր։

Պեղված կացարանների և բաղնիքի նյութերը թվաքրվում են 12-13-րդ դդ. և ունեն բազմաթիվ գուշացնեներ հայաստանի և Անդրկովկասի ժամանակակից հուշարձաններում։

Կիրանց վանքը /13-14-րդ դդ./ գտնվում է Գետաշեն գյուղից 12 կմ արևմուտք Կիրանց գետի ձախ ափին։ Գլխավոր եկեղեցուց 25 մ հյուսիս աեղադրվեց 6 4 մ չափերի հետախուզական շուրջ։ Բացվեց 5 4մ չափերի ուղղանկյուն սենյակ։ Պատերը, պահանված 0,6 մ բարձրությամբ, շարված էին կոպիտ առշված քարերից, ամրացված կավե շաղախով, որոնց վրա նկատվում էին թրծված աղյուսի շարքի հետքեր, 2նայած ամբողջական աղյուսներ չգտնվեցին, նրանց չափերի մասին կարելի է կարծիք կազմել եկեղեցու պատերի աղյուսներից, որոնք ունեն 25 25 5սմ և 24 24 4 սմ չափեր /համեմատության համար կարելի է նշել, որ „Աշուած նրկաթի“, բերդի կացարանների պատերին աղյուսները ունեն 22 22 7 սմ չափեր/։

Ղեղումների ընթացքում հայտնաբերվեց մեծ քանակությամբ հասարակ միավանթ և անվանթ սպորտների, քրեղանների, մի քանի ջնարակած թասերի և 5 կապույտ և սպիտակ բարձրորակ հախմապակյա թափերի ըեկորներ, որոնք թվազգվում են 18-րդ դարով:

Առաջելոց և Կիրանց կանչերի տարածքի ուսումնասիրությունը և պեղումները թույլ են առլիս եղակացնելու, որ նրանց կից կոմպլեքսները գտնվել են քանուկ մանապարհների վրա, եղել են 12-13-րդ դդ.

Հայաստանի ընորոշ զարգացած և քարգավանդ ավաններ:

Ծականեցի գյուղատեղիում պեղվել է 800 մ<sup>2</sup> տարածք: Բացվել են երեք զուգանեռ տեռասներ, յուրաքանչյուրը 6-8 մ լայնությամբ, 50մ երկարությամբ, որոնց վրա պահպանվել են հրդեհից ավերված շինությունների հետքեր: Այդ մասին են վկայում պատերից թափված քարակույթները, մոխրի և վառված գերանների մնացրդները: Ավերածության մասին են վկայում նույն շերտում գտնված մեծ քանակությամբ, ժամանակին ծականեցի եկեղեցու մոտ կանգնեցված, խաչքարերի շարդկած մանրը կտրները:

Առաջին տեռասի վրա որևէ շինության հետք չի պահպանվել: Հարավային մասում քացկեց միայն մեկ տնտեսական հոր:

Երկրորդ տեռասում հայտնաբերվեցին քարով շարված մի քանի պատի հետքեր ճեռասի հարավային մասում քացկեց մեծ հետաքրքրություն ներկայացնող մի տնտեսական համալիր, քաղկացած չորս թոնիրներից, ութ աղբանորերից և տնտեսական հորերից: Կերչիններս ձվածկ, ուղղանկյուն, շեղանկյուն և կոշկածկ տեսք ունեն: Նո.3 թոնիրում գտնվեց երեք խոշոր կավե անոթ:

Երրորդ տեռասում քացկեց կացարանների երկու համալիր: Հարավային մասի համալիրում քացկեցին երկու սենյակի հետքեր, որոնցից հարավայինում գտնվեց տնտեսական հոր, լեցուն կավանոթների մեծաքանակ քեկորներով: Սենյակների հյուսիսային ընդհանուր պատ մեկ մետր լայնությամբ, շարված էր հում աղյուսով, իսկ արևելյան միջնապատ՝ քարով: Հյուսիսային պատի մեջ պահպանվել էր դեպի գետնափոր մտանը առնող դռան մուտքը: Նույն տեռասի հյուսիսային մասում քացկեցին ուղղանկյուն, քարով շարված պատերով սենյակի հետքեր:

Ծականեցի քնակատեղիի պեղումները /նմանատիպ հուշարձաններ Հայաստանում շատ քիչ է ուսումնասիրված/ քավականին հարուստ նյութ ավեց, քաղկացած երկաթե մեխերից, պայտերից, բրոնզե փականի մասից, պարանջանից, խոհանոցային հասարակ, ջնարակած և հախմապակյա անոթ-

Ների քեկորներից, ապակյա ապարանջաններից, որոնք թվագրվում են  
12-13-րդ դր.:

Հետաքրքիր հայտնագործություն է հանդիսանում, հայաստանում  
առաջին անգամ հայտնաբերված մոնղոլական զինվորի թաղումը: Այն բաց-  
կեց Վերոհիշյալ մառանի հատակին, զլխով ուղղված արևմուտք, փոքր ինչ  
հարավ շեղումով: Հանգուցյալը թաղված էր լրիկ ուազմական հանդերձան-  
քով՝ բաղկացած 1 մ երկարություն ունեցող երկաթե թրից, դանակից,  
5 նետասլաքից, որոնցից երեքը մոնղոլական տիպի էին, քրոնզե զան-  
գակներից, հեծելասարքից՝ ուր աշքի են ընկնում երկու խոշոր եր-  
կաթյա ասպանդակները, աջ մեռքի մատին հազգված էր սևաղած նախշերով  
արծաթե մատանի:

Պեղումներից բացված մեծ հրդեհի, ավերված շինությունների,  
շարդարների, ինչպես և մոնղոլական զինվորի թաղման առկայու-  
թյունը ցույց է տալիս, որ այս ընկատեղին ավերվել է մոնղոլական  
արշավանքների ժամանակ, իսկ այստեղ սպանված մոնղոլ զինվորը թաղվել  
է ավերված սենյակներից մեկում:

#### Խ.Ա.ՄՈՒՀԵՂՑԱՆ

/ՀՊՊԲ/

#### ՀԱՅՍՏԱՆԻ ՍԱՍԱՆԹԱՆ ԴՐԱՄՆԵՐԸ

Արևելյան դրամների հոն զանգվածում հայոց պատմության համար  
կարևոր նշանակություն ունեն նաև սասանյան դրամները: Թողարկված  
լինելով իրանի և սասանյանների օրոք իրանին ենթակա երկրներում,  
միջնադարյան առևտության շնորհիկ դրանք դուրս են եկել տեղական ապրան-  
քափոխանակության ներքին ոլորտից և թափանցել են տարբեր երկրներ և  
այդ թվում նաև Հայաստան: Նյութերի վերլուծությունից պարզվել է,  
որ հայկական շուկաներում սասանյան դրամները լայն տարածում են ու-  
նեցել 5-7-րդ դարերում: Մինչ այդ Հայաստանում դրանց ունեցած լայն  
տարածման մասին դատելու բավականացափ հիմքեր դեռևս չկան: Հայոց  
պատմության համար հետաքրքրական է իմանալ թե որոնք են այն դրամնե-  
րը, որոնք թողարկվել են սասանյանների կողմից, բայց վերաբերում են  
Հայաստանին՝ կապված նրա քաղաքական կյանքում եղած փոփոխությունների  
հետ: Նույնական կարևոր է զիտենալ թե արդյոք սասանյաններն իրենց տի-  
րակալության ժամանակներում Հայաստանում դրամներ թողարկել են, թե  
այո, ապա ե՞րբ է այս սկսվել, այդ թողարկումը, ինչ առողջություն է  
ունեցել և ի՞նչով է փաստված կամ որտեղ են պահպան սասանյան դրամ-

Ների այն օդինակները, որոնք վերաբերում են Հայաստանին կամ կտղված են Հայաստանի անվան հետև ԳրաՎոր աղբյուրները, առաքախաչարը լուս են այդ մասին։ Սակայն դրամական ցնությունները պարզել են մի շաբթ հարցեր։ Նախ և առաջ նշենք, որ սասանյան շրջանի դրամագիտական նյութերի նոր համարումները հնարավորություն են ընծեռել Խմբավորելու դրամահատության կենարուններին վերաբերող համառապայությունների ժեները։ Բուլուն հրանում և նվրոպայի դրամագիտության կենարուններում ստեղծվել են կարևոր աշխատություններ, որոնք ընդլայնել են սասանյան դրամների ուսումնասիրության շրջանակը։ Ուրվագծվել է Հայաստանի ապրանքա-դրամական կապերի հիմնական ուղղությունները 5-7-րդ դր. Վերաբերյալ։ Տակավին վերջերս հայտնի դարձավ Հայաստանի սասանյան թագավոր Շապուհի պատկերով արծաթե դրամի ևս մեկ օրինակի գոյությունը, որի մասին նամակով մեզ հաղորդել է քրիտանական թանգարանի դրամագետ Նիկոլաս Լովեկը։ Այդ հազվագյուտ տիպի դրամի տրվյալները դեռևս անցյալ դարի վերջին գիտությանը ներկայացրել եր կովկասագետ հ. Բարտոլեմեյը, որի սասանյան դրամների հարուստ ժողովածուն ակադեմիկոս Դորինի խմբագրությամբ հրատարակվել է առանձին գրքով։ Այնունեալ այն նույնությամբ վերահրատարակվեց Ֆ. Պարուկի կողմից, 1924 թվին։ Հիշյալ դրամը հաստատում է Մովսես Խորենացու այն տեղեկությունները, որոնք վերաբերում են սասանյան արքա Հազկերտ 1-ինի /399-420/ գահաժառանգ որդի Շապուհին Հայաստանում թագավոր կարգելու մասին։ Դրամի վրա հստակորեն պահպանվել են Շապուհի պատկերը և նրա անվան պահապերեն գրությունը։ Ըստ Խորենացու Շապուհը թագավորել է Հայաստանում սասանյան արքա Հազկերտի մահվանը նախորդող չորս տարիների ընթացքում, այսինքն 416-420 թվերին։

Դրամի պատկերագրությունը ներդաշնակ է Խորենացու ժամանակագրությանը, և հնարավորություն է ընծեռում դատելու, որ այն թվագրվել է ոչ որպես դրամական միավոր, այլ հիշատակելու համար Շապուհին թագավոր կարգելու իրողությունը։ Դրամական շրջանառությանը ոչ բնորոշ արծաթյա սասանյան այդ փոքրիկ դրամը ներկայացնում է հայ-իրանական քաղաքական կապերի հետ աղերս ունեցող վկայություն 5-րդ դ. առաջին քառորդի վերաբերյալ։

Տեսագյում այդ կապերը դիտվում են ոչ միայն հայկական շուկաներում սասանյան դրամների ունեցած լայն տարածմամբ, այլև սասանյան արծաթը այն դրամներով, որոնց վրա պահապերեն գրերով նշվում եր Հայաստանի անունը։ Այդպիսի դրամների թողարկումը ծայր է առել սա-

սանյան արքա Թերոզի /457-483/ գահակալության տարիներից հարատևելով մինչև Արտաշիր 3-րդի /628-630/ վերջին օրերը, այսինքն շուրջ 150 տարի։ Հիշյալ դրամները ներկայում պահպան են դրամագիտության իրանական /թերորան/ և նվազագույն կենտրոններում /Վիեննա, Լոնդոն, Համայ և այլուր/։

Հ.Կ.ՍԱՐԳՍՅԱՆ, Մ.Ն.ԱՐՄՊԵՏՅԱՆ  
/ Հ Պ Պ Բ /

ԿԻԼԻԿԻՅԱՆ ՀԱՅԻԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ ՀԱՅՏԱՐԵՐՎԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դրամների տեղագրական տվյալները, ինչպես և գանձերի կազմի ուսումնասիրությունը պատմագիտական մեծ կարևորություն է ներկայացնում։

Ինչպես հայտնի է, դրամագործությունը Կիլիկիայի հայկական պետությունում /1080-1375թ./ դրվագ էր քարծր հիմքերի վրա և այն քավական ամբողջական ուսումնասիրված է, հատկապես վերջին երկու տասնամյակների ընթացքում լույս տեսած Զ.Պատուկյանի մենագրությունների շնորհիվ։ Սակայն Կիլիկիյան հայկական պետության դրամաշրջանառությունը հարցերի լրիվ ընդգրկմամբ գրեթե ուսումնասիրված չէ։ Բոլորովին քննված չեն, մասնավոնդ, Կիլիկիյան հայկական պետության և Հայաստանի կապերը՝ դրամագիտական տվյալներով։

Նշենք, որ դրամագիտական աշխատություններում Կիլիկիա-Հայաստան /ինչպես և Անդրկովկաս/ կապերի իրողությունը քացարձակապես ժընապես է։

Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտական հավաքածույում պահպան են նաև Կիլիկիյան դրամներ՝ գտնված Հայաստանի տարածքում, որոնք թեև քանակով շատ չեն, այնուամենայնիվ որոշակի պարզաբնոււմ են այդ խնդիրը։

Ներկայացվող վեց դրամները գտնվել են պատմական Հայաստանի հինգ վայրերից՝ Անի, Անքերդ, Մեծամոր, Մեղրի և Նախիջևան։ Դրամները թողորկվել են հետևյալ տիրակալների կողմից՝

1. Լեռն Ա /1198-1219/, արծաթ, դրամ։

2. Լեռն Ա, պղինձ, դանգ։

3. Հեթում 1-ին /1226-1270/, պղինձ, դանգ։

4. Լեռն 2-րդ /1270-1289/, պղինձ, քարտեզ։

/Այս դրամը գտնվում է Մեծամորի պատմա-հնագիտական թանգարանում/։

5. Հեթում 2-րդ /1289-1306/, պղինձ, քարտեզ:

6. Ակոն 5-րդ /1374-1375/, պղինձ, փող:

Ներկայացվող արծանագրված դրամները, գանգած լինելով տարբեր վայրերից, տարածքով ընդգրկում են պատմական հայաստանի Հյուսիս-արևելյան հավածի գրեթե ողջ տերիտորիան:

Ըստնարկվող դրամներից միայն մեկն է արծաթյա, մնացածը տարբեր արժենիշերի պղնձյա միավորներ են: Սակայն եզրակացություններ անել Հայաստանում հայտնաբերված կիլիկյան արծաթյա ու պղնձյա դրամների տոկոսային հարաբերությունների մասին այսօրվա նյութեվ հնարավոր չէ: Կարելի է ենթադրել, որ կիլիկյան պղնձյա դրամները ներմուծվել են Հայաստան արծաթյա միավորների հետ և հավասարազոր ընդունելի են եղել Հայաստանի շուկաներում:

Կիլիկյան հայկական պետության արծաթյա դրամները, հատկապես 18-րդ դ. լայնորեն տարածված էին միջազգային շուկաներում, այնպես որ բուն Հայաստանը չէր կարող դուրս մնալ դրամաշրջանառության այս ոլորտից և մենք հեռու ենք այն մտքից, որ այստեղ հիմնականում տարածված են եղել պղնձյա դրամների:

Հետաքրքրական է, որ ըստնարկվող դրամները հայտնաբերվել են Հայաստանի առևտունական այնպիսի կենտրոններից, որոնք կապող օղակներ են հանդիսացել Հայաստանի ու Կիլիկիայի հայկական պետության միջև:

Կիլիկիայի դրամների ուսումնասիրությունը կապված Հայաստանի դրամաշրջանառության հետ, քննվում է առաջին անգամ: Սակայն ներկայացվող նյութը հարավորություն չի ընձեռում անելու վերջնական հետևություններ: Միայն նոր նյութերի հայտնաբերումը կբացահայտի Կիլիկիայի հայկական պետության և Հայաստանի տնտեսական և քաղաքական կապերը՝ դրամագիտական տվյալներով:



Բ Ո Վ Ա Ն Դ Ս Կ Ւ Խ Թ Ց Ո Ւ Խ

Հ.Գ.Ղազարյան, Խաթարված մշակութային շերտով աշելյան հուշարձանների սոցիալ-առաջնական երևույթների վերականգնման փորձ . . . . .	3
Ա.Վ.Թաղեկոսյան, Լուսակերտ առաջին քարտյրի վերին պալեուլիթի մշակույթը . . . . .	5
Հ.Ա.Ազիզյան, Հրազդանի Կիրճի քարայր-կացարաններն ու նըրանցում ընակվող նախարդություններ . . . . .	6
Ա.Դեմիրիանյան, Հ.Ազիզյան, Կուրոքեր Համո-1 քարայրից . . . . .	9
Մ.Հ.Ալիբունյան, Դեմքի փափուկ հյուսվածաշերտի կազմաքանական հետազոտություններ ըստ հասակային եվ սեռույին խմբերի . . . . .	10
Ե.Վ.Խանզադյան, Ճրանովիտի պեղումները . . . . .	11
Ռ.Ս.Քաղալյան, Կառնուտի պեղումների հիմնական արդյունքները .	12
Գ.Ն.Արեշյան, Շամիրամի հուշարձանախմբի սիստեմատիկ պեղումների առանձամյակը . . . . .	13
Հ.Ն.Ախմոնյան, Շամիրամի քաղաքացեղի 1-ին շերտագրական տեղամասի 1983թ. պեղումների արդյունքները . . . . .	15
Ա.Զ.Գևորգյան, Ջարաշամբի դամբարանադաշտի պեղումները . . . . .	17
Վ.Է.Հովհաննիսյան, Մետաղյա իրեր քարաշամբի լամբարանադաշտից . . . . .	18
Ս.Հ.Դեեջյան, Թագակիր իշխանական պատկերը Լոռի-Շերդի ըրոնզեղարյան ընակավայրում . . . . .	19
Լ.Ա.Գետրոսյան, Պեղումներ Զուշակում . . . . .	21
Ա.Ս.Փիլիպոսյան, Պեղումներ Կամոյի շրջանի Սարուխան գյուղում . . . . .	22
Ն.Գ.Ծնգիբարյան, Սասունիկի վաղ երկաթի դարի դամբարանների 1984թ. պեղումները . . . . .	24
Ա.Ա.Խսայյան, Լ.Ն.Քիազով, Ա.Գ.Կանեցյան, Օշականի պեղումները . . . . .	25

Ռ.Մ.Թորոսյան, Արգիշտիխնիլիի պեղումները	27
Ս.Ա.Խսայան, Լ.Ն.Բիազով, Ա.Գ.Կանեցյան, Ս.Գ.Հմայակյան, Նորահայտ ուրարտական դամբարանը Երևանում	28
Ս.Գ.Հմայակյան, Թաղման ծեսն Ուրարտուում	29
Գ.Ա.Տիրացյան, Արմավիրի պեղումները	30
Ժ.Դ.Խաչատրյան, Արտաշատի պեղումները	32
Ա.Վ.Ցոնիկյան, Արտաշատի մարտարապետական համալիրների շար- կածքների որոշ տիպերի մասին	34
Ի.Ա.Կարապետյան, Կարմաղյուրի պեղումները	35
Ֆ.Ի.Տեր-Մարտիրոսով, Անտիկ Շիրակավանի պեղումները	37
Գ.Գ.Չոշարյան, Նոր Նյութեր Դվինի հելլենիստական քնակավայ- րի վերաբերյալ	38
Հ.Ա.Օհանյան, Շամիրամի անտիկ ժամանակաշրջանի քնակավայրի պեղումները	39
Ծ.Ա.Ասատրյան, „Զաքարի քերդ” ամրոցի պեղումները	41
Գ.Հ.Կարախանյան, Հ.Ա.Մելքոնյան, Էջմիածնի միջնադարյան հուշարձանի պեղումների նախնական արդյունքները	42
Ա.Ա.Քալանթարյան, Դվինի արշավախմբի 1983-1984թթ. աշխա- տանքների հիմնական արդյունքները	43
Ժ.Ա.Բաբայան, Դվինի ստորին քերդի պեղումների արդյունքները	44
Ն.Գ.Հակոբյան, Դվինի կենտրոնական թաղամասի պեղումները	45
Ա.Ս.Ժամկոչյան, Դվինի միջնաքերդի հարավային տեղամասի պե- ղումները	46
Ս.Վ.Հարությունյան, Մարմաշենի պեղումների արդյունքները	47
Ռ.Հ.Վարդանյան, Ժամկոչյան ժամանակական ծշգրտումներ	49
Հ.Լ.Պետրոսյան, Առաջածորի մի նորահայտ խաչքարի և նրա ար- ձանագրության մասին	51
Բ.Լ.Սաղոյան, Դիտողություններ արագածոտնի վաղ միջնադարյան պաշտպանական համակարգի մասին	52

Գ.Գ.Սարգսյան, Թեղենյաց կանքի պեղումները և թշնիկի մի արժա- նագրության առիվ ָ . . . . .	58
Հ.Ա.Նստայան, Միջնադարյան հուշարձանների պեղումները հշկանի շրջանում ָ . . . . .	54
Ա.Ա.Մուշեղյան, Հայաստանի սասանյան դրամները ָ . . . . .	57
Հ.Վ.Սարգսյան, Մ.Ն.Կարապետյան, Եիլիկյան հայկական դրամներ հայտնաբերված Հայաստանում ָ . . . . .	59



Հանձնված է արտադրության 28. 03. 1985թ.: Ստորագրված է  
տպագրության 26. 03. 1985թ.: Վֆ 05169 Զափը  $60 \times 84 \frac{1}{10}$   
Թուղթ նո.1, օվանք տպագրություն: Պայմ. 3,72 մամ., տպագր.  
4,0 մամուլ: Ներկ. մամուլ 3,72: Հրատ. հաշվարկ. 3,0 մամուլ:  
Տպաքանակ 150, Հրատ. նո. 6310 Պատվեր 249: Գինը 50 կոպ.:

ՀԱՅՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան 24գ։  
Издательство АН АрмССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24г  
ՀԱՅՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. Եշիածին:  
Типография издательства АН АрмССР, 378310, г. Эчмиадзин.

ԳԻՒ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0227090

A-72012